

18-19(657-658)

30.06.2022

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնականին եւ գիտար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԵՐԲ ԱՐԱՏԵՐԸ ՎԵՐԱԾՎՈՒՄ ԵՆ ՀԱՆՃԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ

Վերջին շրջանում համապատասխան ծառայություններից ստացված պաշտոնական նորանոր տեղեկատվություններ ենք կարդում պետական դավաճանության դեպքերի մասին:

Առաջին պահ չես ուզում հավատալ, որ մեր շրջապատում իրոք կարող են հանդիպել մարդիկ, ովքեր պատրաստ են հանուն մի քանի «արծաթե դրամների» վաճառքի հանել հայրենիքի շահը: Բայց, ինչպես ասում են, փաստերն անողոք են, և այստեղ իսկապես լրջորեն մտահոգվելու բան ունենք:

Մեր հազարամյա պատմությունը դավաճանության մասին փաստեր քիչ չունի, և մենք կարծեք հարմարվել ենք այն մտայնությանը, որ դրանք վաղուց արդեն անցյալ են: Ինչ-որ տեղ նույնիսկ բացասական կերպարը բնութագրող չափանիշներ ենք ստեղծել հայտնի դավաճանների անվամբ: Ու եթե պատմական կերպարներից անհրաժեշտ դասեր քաղելու հարցում նկատելիորեն թերացել ենք, պատճառը թերևս սեփական պատմության հանդեպ դրսևորվող ընդհանրական լոյալությունն է: Դա իրոք այդպես է, որովհետև դավաճանների գործողությունն ուղղված է հենց ազգի գոյության դեմ:

Դավաճանության իրավական, քաղաքական ու հոգեբանական բացատրությունները տարբեր են, և դժվար է սպառնիչ պատասխան տալ այն հարցին, թե ինչու գոյաբանական լրջագույն խնդրի առաջ կանգնած ազգի արգանդում նման վիժվածքներ են բեղմնավորվում: Ջերմ մնալով նաև խնդրի կենսաբանական մեկնությունից՝ նկատենք, որ եթե դավաճանությունը կայանում է կոնկրետ հանգամանքներում, ապա այդ հանգամանքները ստեղծողն ինքնուրույն է: Այստեղ արդեն հարց է առաջանում. արդյո՞ք հասարակությանը, ավելի նեղ իմաստով՝ մատաղ սերնդին, սխալ ենք դաստիարակում: Համապարփակ առումով կրթությունն ու դաստիարակչությունը բավարար հիմքերի վրա են մեզ մոտ, որովհետև հատկապես Արցախյան գոյամարտում հերոսների պակաս երբեք չենք ունեցել: Եթե բնակչության թվաքանակի համամասնությամբ զնահատենք, ապա հազիվ թե մեկ այլ ազգ կամ ժողովուրդ այսքան շատ իրական հերոսներ ունենա: Ուրեմն, ինչպես է, որ հերոսների կողքին նաև դավաճաններ են ծնվում:

Թվում է՝ մեր հասարակությունը փոխադարձ գուրգուրանքի, իրար մշտապես նեցուկ կանգնելու պատրաստակամության պակաս ունի: Երբ մարդը մենակ է իր անձնական պրոբլեմների հետ, երբ սոցիալ-հոգեբանական խնդիրների մեջ խճճված անհատը գթության կարիք ունի, որը չի ստանում յուրայինից, նրան հեշտ է զոմբիացնել ու արտասագային նպատակների գործիք դարձնել, ինչն էլ հաջողությամբ անում են մեր թշնամիները:

Բացահայտված դավաճանների գործողություններին իրավական գնահատական, անկասկած, կտրվի: Խնդիրը, սակայն, սոսկ նրանց պատժելու մեջ չէ, այլ չարի արմատն առհասարակ մեր միջից արմատախիլ անելու: Հայրենիքի դավաճաններին երևակելը պատկան մարմինների գործն է, մեր խնդիրն է, թերևս, միշտ զգոն լինել՝ չնոռանալով փոխադարձ հարգանքի ու գթասրտության մասին, որով գուցե կկարողանանք կանխարգելել մարդկային նոր արատների ձևավորումը: Անուշադրության մատնված արատներն են հաճախ դառնում ծանր հանցագործությունների պատճառ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԳՈՐԳԵՆ ԳԱՐԻԵԼՅԱՆ - 95



Էս հի՛նչ զարմանք յերգիր-վեղըս,
Էս հի՛նչ վարքյար տոն ու տեղըս,
Հունց անինք թա կուճյուր-նեղըս,
Կուճյուր տեղավ ամեն տեղըս:
Մատաղ ինիմ քու Թարթառեն,
Մռավ սարեն, թուփե ծառեն,
Ոյանգ-ոյանգ մարմար քարեն,
Մին էլ քարետ ևախշած տառեն:
Տուն մի արծիվ՝ ես քու ճուղը,

ՂԱՐԱԲԱՂ

Մեզ պահողը՝ հացեն ճոթը,
Մեր շահ-թոթը, սարեն օթը,
Մին էլ արթար պիհին կոթը:
Շատ շեն կենաս, մեր Ղարաբաղ,
Մեր ճիրաքին շող ու շափաղ,
Մեր տոն ու տեղ, հող ու հոտաղ,
Հինչ վեր ունինք՝ լոխ քեզ մատաղ:

Տես նաև՝ էջ 13

ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆ ԱՎԱՐՏՎԵԾ



Հունիսի 24-ին ավարտվեց միասնական քննությունների առաջին փուլը: Քննություններն անցել են կազմակերպված, առանց խախտումների: Գնահատականները 7-ից ստացվել են 5-րդ օրը և ԳԹԿ-ում ու քննական կենտրոններում հրապարակվել նույն օրը: Բողոքարկման հանձնաժողովն աշխատելու է հունիսի 29-ից: ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանից տեղեկացանք, որ երկու դիմորդ բողոքարկել է «Կենսաբանություն» առարկայից՝ 0,25-ի միավորի առնչությամբ, որն իրենց կողմից ամփոփության հետևանք է գրառումներն այն ձևով չեն կատարել, որ համակարգիչը կարողանա կարդալ: Ուրիշ բողոքարկում չի եղել թեստերի բովանդակության և տեխնիկական առումով:

Արդյունքները պաշտոնական հրապարակումից անմիջապես հետո արագ վերլուծության են ենթարկվել ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանի կողմից: «Լուսարար»-ը, ամեն անգամ տեղեկություններ վերցնելով, ուշադրություն դարձրեց մի օրինաչափության վրա, որն էլ ներկայացնում է:

Նախորդ տարվա համեմատությամբ այս տարվա արդյունքները բոլոր առարկաներից գրեթե պահպանվել են: Մեկ-երկու տոկոսի տարբերություն են տալիս 18-20 միավորները: Բայց ահա բացասական համարվող 0-ից մինչև 7,25 միավորները բավականաչափ աճել են այն առարկաներից, որոնք մախկնում երկու աստղանիշով էին, այսինքն՝ մրցութային լինելով հանդերձ, վճարովի համակարգում նախորդ տարիներին վերցվում էր դրանց ատեստատի գնահատականը: Իսկ այս տարի այդպես չէ, քանի որ երկու միասնական քննություն հանձնելը պարտադիր է: Այս որոշումը հրապարակվել էր 4-5 ամիս առաջ, սակայն, ինչպես երևում է, դա բավականաչափ ժամանակամիջոց չէր դիմորդների համար պատրաստվելու, ինչը և արդյունքներն են փաստում: Բերենք մի քանի տվյալներ:

«Կենսաբանություն» առարկայի միասնական քննությանը մասնակցած 101 դիմորդից 44-ը ստացել է 0-7,25 միավոր (43%), նախորդ տարի կազմել էր 32%: Այս տարի «Կենսաբանություն» հանձնել են նաև «Հոգեբանություն» մասնագիտության դիմորդները, ընդ որում, նրանց թիվն ավելացել է: Եվ դրական անցումային շեմը չհաղթահարողների մեծ մասը հենց նրանք են:

«Մաթեմատիկա»-ի քննությանը մասնակցած 215 հոգուց 63-ը ստացել է 0-ից մինչև 7,25 միավոր՝ 29%: Ըստ մասնագետների, այս տարվա մաթեմատիկայի թեստերը համեմատաբար մատչելի են եղել, այլապես ավելի մեծ կլինեք բացասականների թիվը: «Մաթեմատիկա» հանձնել են նաև «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության դիմորդները, որոնք նախորդ տարիներին կարող էին փոխան-

ցել ատեստատի գնահատականը: Եվ այս տարի մաթեմատիկայից «կտրվողների» մեծ մասը հենց նրանք էին:

«Ֆիզիկա»-ի միասնական քննությանը մասնակցած 59 դիմորդից 29-ը՝ 49%, նախորդ տարի՝ 33%, 0-ից մինչև 7, 25 միավոր է ստացել: Նախկինում ֆիզիկայի գնահատականը ատեստատից էր վերցվում ՏՏ, «Ֆիզիկա և մաթեմատիկա», Շուշիի տեխնոլոգիական համալսարանի որոշ մասնագիտություններում: Այս տարի այդ հնարավորությունը չկար, և ահա՝ արդյունքը:

Ավելի ցավալի են «Հայոց պատմության» արդյունքները: Այս տարի այս առարկան հանձնել են նաև բանասիրականի դիմորդները: 126 հոգուց 68-ը, որը կազմում է 54%, ստացել է 0-ից մինչև 7,25 միավոր:

Դիմորդներն ասում են, որ թեստերը, չնայած դասագրքից դուրս չէին, բայց շտեմարանում եղածի պես չէին: Պատճառաբանում են, որ ուշ են իմացել, ինչպես ասացինք՝ 4-5 ամիս առաջ, որոշները՝ նույնիսկ հայտագրման ժամանակ, որ պետք է ընտրած մասնագիտության համար երկու միասնական քննություն հանձնեն:

Ինչպես նկատում է ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը, սա ցույց է տալիս, որ ավագ դպրոցում (միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարաններում) սովորում են ոչ թե գիտելիք ստանալու, այլ քննություն հանձնելու համար: Եթե սովյալ առարկայից քննություն չկա, այն ուշադրության չի արժանանում: Սա մեկ անգամ ևս ապացուցում է, որ դիմորդները շտեմարաններն անգիր են անում քննության համար, և եթե թեստերն անբողոքությամբ նույն պատկերը չունեն, ինչ շտեմարանում, ընկնում են խուճապի մեջ: Ասել է թե՛ շրջանավարտները ոչ թե ծրագիրն են յուրացնում, այլ անգիր են անում շտեմարանը:

Յու. Քարամյանի կարծիքով, անկախ այն բանից՝ սովյալ առարկայից քննություն կհանձնեն, թե ոչ, միջնակարգ կրթության շրջանավարտը առնվազն պետք է նվազագույն դրական շեմը հաղթահարի, մասնավաճառ եթե ցանկություն ունի ընդունվել սովյալ մասնագիտությամբ:

«Ի՞նչ է նշանակում 1 կամ 2 միավոր ստանալ, և այդպիսիները շատ էին: Ընդհանրապես մենք շուտվանից ենք ձգտում, որ բոլոր առարկաներից ընդունելության քննություններ լինեն: Տարրական մանկավարժություն ընտրած դիմորդը, որը վաղը պետք է դպրոցում դասավար աշխատի և հիմք ստեղծի, երեսներին տրամաբանական մտածողությունը զարգացնի, մաթեմատիկայից չպե՞տք է տարրական գիտելիքներ ունենա: Մեծ բան չի պահանջվում նրանից. պետք է զոմե թեստի առաջին 40 առաջադրանքները, որոնք ցածր մակարդակի են՝ բանավոր լուծվող, կարողանա կատարել, որի դեպքում 10 միավոր կստանա, եթե անգամ հատուկ չի պարապել: Այդպես նաև՝ մյուս առարկաների դեպքում:

ԳԹԿ տնօրենը համոզված է, որ հաջորդ տարիներին վերը նշված մասնագիտությունների դիմորդներն ավելի լավ կհանձնեն քննությունները, քանի որ ավելի երկար ժամանակ կհատկացնեն դրանք սերտելուն:

Հունիսի 27-ից սկսվել է միասնական քննությունների երկրորդ փուլի հայտագրումը: Հայտագրվելու իրավունք է տրված բանակից զորացրված զինծառայողներին, հարգելի պատճառով առաջին փուլին չմասնակցած դիմորդներին: Այս տարի այս ցանկին ավելացել են նրանք, ովքեր ինչ-ինչ պատճառներով բաց են թողել առաջին փուլում հայտագրվելու հնարավորությունը:

Հայտագրվում են միայն քննությունները, առավելագույնը՝ երկու: Քննությունները կընթանան հուլիսի 4-9-ը:

Սեփ. լրատվություն

ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՄՐՅԱՆԱԿՆԵՐ՝ «ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»-ԻՑ

Հունիսի 12-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատը լեփ-լեցուն էր դպրոցականներով: Առիթը մայիս ամսին Երևանի Անանիա Շիրակացու անվան միջազգային կրթահամալիրի կողմից Արցախում անցկացված հանրապետական բաց օլիմպիադայի արդյունքների ամփոփումն ու մրցանակների հանձնումն էր: Այդ նպատակով Արցախում էր ձևավորվելին ղեկավարությունը՝ նրա հիմնադիր տնօրեն Աշոտ Ալիխանյանի ղեկավարությամբ: Ներկայումս ողջունեց ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը՝ շնորհակալություն հայտնելով ճեմարանի տնօրինությանը Արցախում տարբեր առարկաներից օլիմպիադա կազմակերպելու համար և մշելով, որ մեծ թվով մրցանակակիրների առկայությունը հպարտության զգացում է առաջացնում բոլորի մոտ:



Օլիմպիադային մասնակցել է 4-8-րդ դասարանների 1500 աշակերտ, որից 827-ը՝ Արցախից: 241 հոգի Արցախից արժանացել է գովասանագրի, 93-ը՝ դիպլոմների:

Ամփոփումը կատարվել է հետևյալ կերպ: Նախ՝ կազմկոմիտեն առաջարկել էր ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Միքայել Համբարձումյանին, որն Արցախում օլիմպիադայի համակարգողն է, միգրացիոն արցախցի աշակերտների համար ավելի հեշտ տարբերակ նախատեսել, սակայն կտրականապես մերժում է ստացել, ընդհակառակը, վերջինս առաջարկել է հաջորդ տարի ավելի բարդ տարբերակ մշակել՝ համոզված, որ մեր երեխաները կհաղթահարեն:

Եվ այսպես, բոլոր 1500 մասնակիցների համար սահմանվել են մրցույթի մույն չափանիշները: Ըստ այդմ, գովասանագրի են արժանացել բոլոր նրանք, ովքեր հավաքել են օլիմպիադայի համար նախատեսված ընդհանուր միավորների առնվազն 50-59 տոկոսը, այսինքն՝ զոնե 10 միավոր: Մաթեմատիկա, պատմություն, բնագիտություն առարկաների նկատմամբ նվազագույն այլ սանդղակ է կիրառվել. գովասանագրի համար նվազագույն շեմը 7 միավոր էր՝ ելնելով դրանց բարդությունից:

Իսկ ովքեր հավաքել են ընդհանուր միավորների 60 և ավելի տոկոս, ըստ աստիճանականության արժանացել են 1-3-րդ կարգի դիպլոմների: 1500 հոգուց այս տարի ոչ մեկը

1-ին կարգի դիպլոմ չի ստացել, եղել են 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ: Այուրիքում ընդհանրապես հանրակրթական արդյունքներով հաղթող չի եղել, քանի որ չեն եղել աշակերտներ, որոնք մասնակցած լինեն բոլոր առար-

կաներից: Ճեմարանն ունեցել է 33 հաղթող: Արցախում ոչ բոլոր մասնակիցներն են բոլոր առարկաներից մասնակցել: Ունենք ընդամենը մեկ հաղթող:

Դիպլոմների հանձնման համար բեն հրավիրված՝ կրթահամալիրի հիմնադիր-տնօրեն Աշոտ Ալիխանյանը 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ հանձնեց 93 մրցանակակիրներին: Նրանք նաև ճեմարանական լոգոյով շապիկներ սկսել ստացան:

Կան երեխաներ, որոնք 44-օրյա պատերազմի ժամանակ սովորել են ճեմարանում: Նրանց որպես վաղեմի ծանոթների էր ողջունում պարոն Ալիխանյանը:

Ըստ առարկաների ցուցաբերած բարձր արդյունքների համար 5 հոգի արժանացել է 1-ին կարգի դիպլոմի: Նրանք են՝ Սանասար Սարգսյան (հայոց լեզու), Նախիջևանի միջնակարգ դպրոց, 6-րդ դասարան, Սմբատ Սուլեյմանյան (հայոց լեզու)՝ Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոց, 5-րդ դասարան, Տաթև Մարտիրոսյան (հայոց լեզու)՝ Ֆիզմաթ: Երկու առաջին կարգի դիպլոմակիրներ, որոնք հավաքել են ամբողջ Արցախում ամենաբարձր՝ 19 և ավելի բարձր միավորներ, օլիմպիադայի կազմկոմի-

տեին կողմից բացի դիպլոմներից ստացան հետաքրքրաշարժ գրքեր: Նրանք են՝ Անահիտ Գրիգորյան (մաթեմատիկա)՝ Ստեփանակերտի հ. Արոմյանի անվան հ. 1 դպրոց, 5-րդ դասարան և Կարինե Բախչյան (պատմություն)՝ Ասկերանի միջնակարգ դպրոց, 8-րդ դասարան:

Օլիմպիադայի կազմկոմիտեն որոշել է նաև գլխավոր հաղողներին: Նրանք այն աշակերտներն են, ովքեր հանրակրթական արդյունքներով, այսինքն՝ բոլոր առարկաների հանրագումարով հավաքել են միավորների 50 տոկոսից ավելին: Այդպիսի 4 աշակերտ կա, որոնցից 3-ին շնորհվել է գովասանագրի, մեկին՝ դիպլոմ և գրքեր:

Բոլոր առարկաների հանրագումարով ցուցաբերած բարձր արդյունքների համար գովասանագրի է արժանացել Խնձրիստանի դպրոցից 5-րդ դասարանի սան Մարի Բաղայանը՝ ստանալով նաև



«Հիշատակ ճեմարանից» մակագրությամբ գիրք: Նմանապես՝ Մարտունու հ. 1 դպրոցից 5-րդ դասարանի աշակերտ Ավետ Ղազարյանը, Ստեփանակերտի հ. 1 դպրոցից 5-րդ դասարանի սան Լիա Ապրեսյանը, հ. 8 դպրոցից 4-րդ դասարանի աշակերտ Արման Օհանյանը:

Եվ վերջին մրցանակակիրը՝ 3-րդ կարգի դիպլոմակիրը, կարելի է ասել՝ օլիմպիադայի հաղթողը, հ.3 դպրոցից 5-րդ դասարանի աշակերտ Արամ Պետրոսյանն է: Բացի գրքից ու շապիկից օլիմպիադայի կազմկոմիտեն որոշեց ինչպես բոլոր ընդհանուր արդյունքներով դիպլոմակիրներին, Արամին նույնպես տրա-

մադրել հավաստագիր առ այն, որ նա ճանաչվել է հանրապետական բաց օլիմպիադայի 3-րդ կարգի դիպլոմակիր և իրավունք է ստացել 2022-2023 ուստարվա ընթացքում բափուր տեղի առկայության դեպքում առանց քննություն հանձնելու ընդունվել Երևանի «Շիրակացու ճեմարան» կրթահամալիրի համապատասխան դասարան, իհարկե՝ ցանկության դեպքում: Ճեմարանի ներկայացուցիչն ասաց, որ իրենց ցանկությունն է, որ Արցախի երեխաները մնան և սովորեն տեղում, իսկ իրենց կաջակցեն ինչով կարող են, բայց քանի որ բոլոր հաղողներն այս հավաստագիրը ստացել են, Արամին չտալ չէին կարող:

ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Միքայել Համբարձումյանին ճեմարանի կողմից հայտնվեց շնորհակալություն՝ կազմակերպչական հարցերում միշտ իրենց կողքին լինելու համար:

Օլիմպիադային ներգրավվածության և աջակցության համար Ստեփանակերտի հ. 5 և հ. 9 դպրոցները պարգևատրվել են շնորհակալագրերով ու գրքերով:

Մրցանակակիրներին շնորհավորեց «Շիրակացու ճեմարան» կրթահամալիրի հիմնադիր-տնօրեն Աշոտ Ալիխանյանը. «Երբ նայում եմ մեր նոր աճող սերնդին, հավատում եմ, որ չի կարող պատահել, որ մենք հզորներից մեկը չդառնանք: Դա մեր ձեռքերում է, իսկ այդ զենքը գիտելիքն է, ազնվությունը, արդարությունը, ինչն էլ միշտ բարոյալ են մեր մեծերը»:

Ելույթ ունեցան նաև աշակերտները, որոնք շնորհակալություն հայտնեցին կազմակերպիչներին՝ մնան միջոցառում կազմակերպելու և իրենց ուսուցիչներին՝ տված գիտելիքների համար:

Նշենք, որ ԱՀ կառավարության և «Շիրակացու ճեմարանի» կրթահամալիրի միջև ստորագրվել է հուշագիր Արցախում մնանապես ուսումնական հաստատություն բացելու մասին: Նոր ուսումնականից այն կգործի: Ներկայումս դպրոցին հատկացված շենքի վերանորոգման աշխատանքներն են ընթացում: Ա. Ալիխանյանը մեզ հետ զրույցում ասաց, որ կրթահամալիրի պատվիրակությունն այս օրերին ԱՀ կառավարությունում քննարկումներ է անցկացնելու հիմնադրման փաստաթղթերի, կրթական ծրագրերի առնչությամբ: «Մեր նպատակն է Արցախը դարձնել կրթական ինդուստրիայի կենտրոն», ասաց նա:

Ս. ՉԱԲՐԵՆՅԱՆ

ՄՐՅԱՆՔ «ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ԳԻՏԱԿՐԹԱՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Արցախի «Շիրակացու ճեմարան»-ը փնտրում է ուսուցիչներ ավագ դպրոցում հետևյալ առարկաների դասավանդման համար՝

- Հայոց լեզու և գրականություն.
- Ռուսաց լեզու և գրականություն.
- Անգլերեն.
- Պատմություն.
- Հասարակագիտություն.
- Աշխարհագրություն.
- Մաթեմատիկա.
- Ֆիզիկա.
- Կենսաբանություն.
- Քիմիա.
- Ինֆորմատիկա.
- Գծագրություն.
- Ֆիզկուլտուրա.
- ՆՁՊ.
- Կերպարվեստ.
- Տրամաբանություն:

Արցախի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիրը հիմնադրվել է ԱՀ կառավարության և «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի միջև 07.05.2022թ. կնքված հուշագրի դրույթները կյանքի կոչելու նպատակով: Այն կոչված է ստեղծված բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում նպաստելու Արցախի կրթական համակարգի արդիականացմանն ու հզորացմանը, գիտակ և կենսունակ սերնդի ձևավորմանը: Մանկավար-

ժական անձնակազմի և սովորողների մրցության ընդունվածներն իրականացվում և ուղղորդվում է «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի կողմից: Արցախի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիրի Ավագ դպրոցում կազմակերպվում է տարբերակված հոսքային ուսուցում՝ խորացված ուսուցմամբ առարկաների ընտրության, ինչպես նաև աշխատանքային գործունեության լայն հնարավորություն տալով սաներին: Առարկայական ծրագրերը մշակվում են շարունակականության սկզբունքով, համաձայնեցվում են «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի համապատասխան ամբիոնների հետ և վերջնականապես հաստատվում են Արցախի ճեմարանի գործադիր մարմնի կողմից: Առարկայական ծրագրերի անբաժանելի մասն են կազմում ուսումնական էքսկուրսիաները, այդ թվում՝ միջառարկայական, որոնք միտված են խթանելու Արցախի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիրի հայրենաճանաչությունը, սովորողների հետաքրքրասիրությունն ու ստեղծարարությունը, ինչպես նաև ուսանողական, ուսուցչական և ծնողական համայնքների համագործակցությունը: Արցախի ճեմարանի ուսումնական գործընթացի անբաժանելի

մասն են միջառարկայական պլանավորումն և ուսուցումը: Միջառարկայական ուսուցումը միտված է սովորողների կողմից խնդիրը համալիր ընկալելուն ու լուծման համընդգրկուն տարբերակներ ստեղծելուն: Ուսումնական գործընթացի անբաժանելի մասն են կազմում հետազոտական, կամավորական նախագծերի իրականացումը (տեղական և համաշխարհային նշանակության), որոնք բխում են սովորողների հետաքրքրասիրությունից, համայնքի կարիքներից և միտված են խնդիրների վերհանման միջոցով կյանքի կոչելու լուծումները:

Արցախի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիրի ուսուցչը պետք է իրականացնի Արցախի ճեմարանի առջև դրված վերոհիշյալ խնդիրները: Ուսուցչի գործունեության գերնպատակն է ապահով, աջակցող և հոգատար կրթական միջավայրում ազգային հենքի վրա կերտել հայրենիքի արժանի և բանիմաց քաղաքացու, որը, վստահ իր ուժերին, պատրաստ կլինի դիմակայելու ցանկացած մարտահրավերի: Արցախի ճեմարանի ուսուցիչները հանդիսանում են «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի համապատասխան ամբիոնի կամ մեթոդիկական անդամ, հեռավար կամ առցանց եղանակով մասնակցում են նիստե-

րին, համագործակցում են համապատասխան տարիքային խմբի պատասխանատուների հետ, ստանում անհրաժեշտ մեթոդական աջակցություն: Ուսուցչին իրականացնում է առարկայական, միջառարկայական ծրագրերի ստեղծում և/կամ տեղանագում, թեմատիկ միավորների մշակում և իրականացում Արցախի Շիրակացու ճեմարանի Շեղինակային ծրագրի պահանջներին համապատասխան: Գործունեությունը ծավալում է սովորողակենտրոն ուսուցման սկզբունքով, արձանագրում է յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, հետաքրքրությունները և կազմակերպում է կրթադաստիարակչական գործունեություն՝ ելակետ ունենալով տվյալ սովորողի ներդրման կարգադրումը:

Պահանջվող գիտելիքներ և կարողություններ

- գրագետ կիրառել մանկավարժական և հոգեբանական մոտեցումները.
- ընտրել և կիրառել սովորողների ուսումնառության տարբեր ոճերին և կրթական կարիքներին համապատասխան դասավանդման տեխնոլոգիաներ, մեթոդներ.
- իրավիճակները վերլուծել, գնահատել և համապատասխան արձագանքով հետադարձ կապ ապահովել. Արցախի «Շիրակացու

ճեմարան» գիտակրթական համալիր

- թիմով աշխատել, համագործակցել սաների, գործընկերների հետ.
- գրագետ, արտահայտիչ և մատչելի խոսել.
- Արցախի Շիրակացու ճեմարանի հեղինակային ծրագրի գաղափարաստությունը, պահանջները, ինչպես նաև այլ նորարարական գաղափարներ ընդունելու, սովորելու և կիրառելու պատրաստակամ լինել.
- անգլերենով կամ այլ օտար լեզուներով կարողալ, հաղորդակցվել և/կամ կատարելագործվելու պատրաստակամություն դրսևորել:

Դիմելու կարգը

Ձեր ինքնակենսագրականը, բարձրագույն կրթության դիպլոմի և աշխատանքային փորձառությունը հավաստող (փաստաթղթերի լուսապատճենը սկսած) կարող եք ուղարկել career.artsakh@shirakatsy.am հասցեին: Նամակի թեմայի (subject) դաշտում պարտադիր մշեք այն հաստիքի անվանումը, որի համար դիմում եք (օր.՝ Պատմության ուսուցիչ): Նախնական ընտրություն անցած թեկնածուները կիրավիրվեն մրցույթի:

Դիմելու վերջնաժամկետը՝ 03.07. 2022թ.:

ԱՄՔԻՆ

ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԱՏՐԿԱՍՏՈՒԹՅՈՒՆԻ ԶԵՐՉ ԴԱՅԵԼՈՒ ԵՎ ԸՆԵԱԴԱՏԱԿԱՆ ԱՄՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ



Արամ ՓԱՆՉԱՆՅԱՆ «Այբ» կրթական հիմնադրամի Չես Նախագահ

21-րդ դարում ստրուկ դաճումը ամենապարզ միջոցը ամեն բանի հավատարմ է: Վատն այն է, որ այդ դեպքում մարդիկ ոչ միայն ստրկանում են, այլև անգամ չեն ճանաչում իրենց տիրոջը ու չեն գիտակցում, թե ինչ նպատակների են ծառայում: Ինչպես գերծպահենք մեր երեխաներին ստրկամտությունից և ինչպես օգնենք նրանց ձևավորել մտքի զգոնություն ու ազատություն:

Մարդիկ հավատում են ամեն բանի, ֆեյսբուքում կարդում են մի բան և միանգամից կիսվում՝ առանց մտածելու, թե որտեղից է գալիս, ինչու է գրված, ով է դա ստեղծել, ինչ նպատակներ է հետապնդել, և ուրիշ ինչ հետևանքների կբերի: Սա խոսում է շատ ու շատ մարդկանց մոտ քննադատական մտածողության բացակայության մասին: Ի՞նչ անենք, որ մեր երեխաներն ունենան այդ կարողությունը: Ինչպես ձևավորենք քննադատական մտածողություն:

Որպեսզի խոսենք քննադատական մտածողության մասին, որը քարզամովում է երկակի՝ քննադատական և քննական մտածողություն, պետք է սկզբից մտածենք, թե ինչ է դա, որտեղից է այդ հասկացությունը եկել մեզ հասել, ինչ իմաստ ունի և ինչպես է աշխատում: Առաջին՝ այն ամեն դեպքում քննական է մարդկանց համար, բնական է լինել քննադատական մտածողությանը օժտված մարդ, դա կարողություն է, մշակույթ, դա մտածելու ձև է, որը պետք է ստեղծվի, ձևավորվի, կայանա, կառուցվի մարդու ընդհանուր մտածողության դաշտում: Ու այդ գործընթացը մարդու կրթության կարևոր բաղադրիչ է, և մեր կրթությունը, ցավոք, չունի դրա համար անհրաժեշտ գործիքներ: Շատ հաճախ մարդիկ մտածում են, որ քննադատական մտածողությունը կասկածամտություն է, որ դա ի սկզբանե քննադատական վերաբերմունք է մարդկանց ասածին կամ արածին, քննադատել է այլ մարդկանց տեսակետը կամ գործունեությունը: Իրականում դա այդպես չէ: Քննադատական մտածողությունն ամբողջապես այլ բան է. դա առաջնահերթորեն թո սեփական մտածողությանը անդրադարձող երևույթ է, մի անընդհատ գործող ուշադրության տեսակ, որն անդրադառնում է այն բանին, թե ինչպես են ընկալում այն, ինչ մարդիկ քեզ ասում են: Մարդիկ պարտավոր չեն միշտ ճշմարիտ խոսել, պարտավոր չեն հարգել ձեր մտածողությունը և ամեն ինչ ձեզ մերկայացնել այնպես, որ դուք դրա մասին մտածելու կարիք չունենաք: Մարդիկ ասում են այն, ինչ ասում են և անում են այն, ինչ անում են: Չեր խնդիրն է, ձեր պատասխանատվությունն է ընկալել դա այնպես, որ չխաբվեք, չընկնեք մոլուցքների մեջ, այլ կարողանաք հնարավորինս ճշմարտությունը վեր հանել և ճիշտ եզրակացության գալ:

Ինչպես է արտահայտվում քննադատական մտածողությունը: Մարդիկ, որոնք այդ մտածողությանը հարում են կամ այդ մտածողության սովորույթ ունեն, կարողանում են տեսնել, նկատել, դուրս բերել այն իրավիճակները կամ այն մտքերը, կամ այն տրամաբանական շրջանները, որտեղ կա մի ինչ-որ կասկածելի բան, մի բան, որ իրենց դուր չի գալիս, մի բան, որ իրենք կանխազգում են ին-

տուիցիայի շնորհիվ, որը վարժված է նման բաներ վերհանել: Եվ դրանից հետո ուղեղը սրընթաց սկսում է գնալ այդ մտքերի շրջանով ու փորձում է վեր հանել մի քանի բան. ո՞րն է աղբյուրը, որտեղից է այս տեղեկությոնը, արդյո՞ք աղբյուրը վստահելի է, արդյո՞ք այստեղ չկա տրամաբանական շեղում, արդյո՞ք այն մարդը, որն այս տեղեկությոնը ձևակերպել է, չի փորձում խաղալ իմ զգացմունքների հետ: Այս բոլոր հարցերին պատասխանելու զուգընթաց մարդը նաև մտածում է՝ իսկ ինչպե՞ս են ընկալեցի, իմ ընկալումը հուզակա՞ն էր, թե՞ բովանդակային, արդյոք այլ տարբերակներ հնարավոր են, թե ոչ, էլնելով այս տեղեկությոնը՝ հիմա ի՞նչ գործողություններ պետք է անեն, թե՞ սա ընդամենը ինձ տեղեկացնելու համար է: Այս բոլոր հարցերը կարևոր են, դրանք հնարավորություն են տալիս ամբողջապես ընկալել այն տեղեկությոնը, որը մենք ստանում ենք: Ինչո՞ւ է պետք քննադատական մտածողությունը, ինչո՞ւ է այն կարևոր, և ինչո՞ւ է նա որոշեցի այսօր սրա մասին խոսել:

21-րդ դարում տեխնոլոգիաները, ոչ թե նրանք, որ համակարգիչներ կամ ցանցեր են, այլ մարդկանց հետ աշխատելու տեխնոլոգիաներ, այնքան են զարգացել, որ շատերը ձեռք են բերում մեծ հզորություն, մեծ կարողություն, մեծ իշխանություն այդ մարդկանց վրա՝ տիրանալով նրանց մտածողությանը, գտնելով միջոցներ ու ձևեր՝ ներթափանցելու իրենց պատկերացումների մեջ, ձևավորելով այն մտածողություններն ու ընկալումները, որոնք ելնում են այդ մարդկանց իշխանական նպատակներից: Եվ եթե դուք ուզում եք չծառայել մարդկանց, չդառնալ անգիտակցաբար ինչ-որ մարդկանց կամ ինչ-որ կառույցների, կամ ինչ-որ պետությունների վիրտուալ գործի մաս, զինվոր, որը ծառայում է ի նպաստ այլոց կամ միզոցե ի վնաս ինքն իրեն, իր հասարակությանը, իր հարազատներին, դուք պետք է տիրապետեք քննադատական մտածողությանը, պետք է կարողանաք տարանջատել ճշմարտությունը գիտակցված ստանալուց, կարողանաք դուրս բերել իրական փաստերն ու տարբերակել մտածած կամ մոգոնած իրավիճակներից և կարողանաք գալ սեփական եզրակացությունների:

Վերջերս մի միջոցառման ժամանակ ինձ հարցրին՝ լավ, իսկ ինչպե՞ս ձևավորել քննադատական մտածողություն, ի՞նչ անել, որ երիտասարդը, երեխան և, ոչ միայն, նաև մեծահասակը սովորի ու կարողանա տիրապետել այդ կարևորագույն կարողությանը: Առաջին՝ բոլոր դեպքերում, երբ երեխան մի բան ասում է ձեզ, մի ինչ-որ միտք է արտահայտում, հարցրեք. «Ինչո՞ւ է սա դու այդպես մտածում»: Այս հարցի պատասխանը փաստարկը պետք է լինի: Երեխան պետք է դրան ի պատասխան փորձի բերել հիմնավորումներ իր ասածին: Երբ սկսում է հիմնավորել սեփական մտքերը, և դա նրա համար դառնում է սովորական երևույթ, փնտրում է հիմնավորումներ այլոց ասած մտքերի մեջ: Սա քննադատական մտածողության առաջնային և կարևորագույն հատկանիշն է՝ տալ որտեղից գիտես հարցը: Ի դեպ, այս հարցերը տալուց պետք է սկզբից հակադրամտադրվել, չպետք է այս հարցերը տալ այնպես, որ երեխան մտածի, թե դուք կասկածում եք իր ասածի մեջ կամ դժկամությամբ եք վերաբերվում այն բանին, ինչ նա ասում է: Հանգիստ, ուղղակի պարզ հայացքով ասեք՝ որտեղից գիտես, ինչո՞ւ է սա կարևոր: Որովհետև երեխան կսովորի կարևորել աղբյուրները, կսովորի գիտակցել, որ երբ ինքը ինչ-որ բան ասում է, պետք է հիմնավորի, թե ինչու է վստահում այն աղբյուրին, որտեղից ստացել է այդ տեղեկությոնը: Եթե նա կարողանա դա հիմնավորել, շատ լավ է, եթե չկարողացավ, պետք է մտածեք՝ ինչու եք կարծում, որ այդ աղբյուրն այնքան էլ վստահելի չէ: Սրանով կօգնեք նրան տարանջատել վատ աղբյուրները լավ աղբյուրներից, համարել տեղեկությունը և հասկանալ, թե որ դեպքերում կարելի է վստահել աղբյուրին և այլն: Սա երկար պատմություն է, սակայն կարծում եմ, եթե ունեք որոշակի փորձ և կարողանում եք ուղղակի տրամաբանորեն գիտակցել, թե որ աղբյուրներին և երբ կարելի է հավատալ և երբ չի կարելի հավատալ, սպա կկարողանաք նաև սա բացատրել երեխային:

Երրորդ, պետք է ձևավորել զգոնություն, ոչ թե կասկածամտություն: Շատ վստահավոր է, երբ մենք երեխային անընդհատ հակատրամադրելով ինչ-որ տեղեկությոն, ինչ-որ մարդկանց ասածի դեմ՝ նրան դարձնում ենք կասկածամիտ: Նա սկսում է ամեն ինչ կասկածի տակ դնել: Չի կարող պատահել, որ մարդ ապրի՝ առանց վստահելու այլոց: Ընդհակառակը, մենք երջանիկ ենք, երբ վստահում ենք այլ մարդկանց, մենք երջանիկ ենք այն հասարակությունում, որտեղ վստահում ենք մեր հարևաններին, մեր հյուրերին և մեր կառավարությանը: Այնպես որ, կասկածամտությունը լավ բան չէ, բայց զգոնություն է պետք: Ինչո՞ւ է սա տարբերվում: Նրանով, որ զգոնությունը տեսնում է. զգում է, կանխազգում այն դեպքերը, իրավիճակները, երբ պետք է միացնել կասկածները և չի կիրառում կասկածը այն պահերին, երբ դրա կարիքը չկա: Դուք կհարցնեք, իսկ ինչպե՞ս ձևավորել այդ զգոնությունը՝ մատնանշելով իրավիճակները, երբ կասկածի տեղիք կա: Սա սկզբում պետք է լինի տրամաբանական, և պետք է ամեն անգամ ասեք՝ տես, դու չնկատեցիր այս բանը, տես՝ այս միտքը այս մտքի հետ իրականում կապված չէ: Տես՝ այստեղ քեզ պատկեր են ցույց տալիս, որը շատ անհավանական է. ամբողջապես այլ իրավիճակից է, որովհետև տես՝ այս-այս-այս հատկանիշներն ունի: Սկզբից դիտարկելով, տրամաբանելով, նկատելով՝ մենք հետո ինտուիտիվ, ինքնաբերաբար, ենթագիտակցաբար այդ բաները շարունակում ենք տեսնել: Այդպես է աշխատում ցանկացած վարժանք: Եվ այս զգոնություն վարժանքը մույն սկզբունքն ունի:

Չորրորդ և կարևորագույն միջոցներից մեկը. ժամանակ տալ երեխային՝ կանգ առնելու, հասկալից, մտածելու, երբեք մի ակնկալեք արագ պատասխան, մի զայրացեք, եթե երեխան որոշում է մի քիչ կանգ առնել ու մտածել, անգամ եթե ձեզ քվում է, թե հարցի պատասխանը շատ պարզ է ու շատ բացահայտ: Ինչո՞ւ է սա կարևոր, որովհետև մենք կարողանում ենք տեսնել, կանխազգալ որոշ բաներ, երբ անջատում ենք մեր զգայական մեխանիզմը, երբ դրան որոշ ժամանակ հնարավորություն ենք տալիս հանգստանալու և միայն դրանից հետո միացնում ենք մեր ուղեղը: Մեր առաջին լեռնաճագարը արժանազանը շատ հաճախ խանգարում է մեզ քննադատաբար ընկալելու իրականությունը և ճիշտ եզրակացությունների գալ, անընդհատ քննարկել ոչ միանշանակ իրավիճակներ, որտեղ չկա կամ հավանաբար չկա մեկ ճշմարիտ պատասխան, որտեղ տարբեր մարդիկ տարբեր շահերով և տարբեր ընկալումներն ունենան: Ինչո՞ւ է սա կարևոր: Որպեսզի երեխան գիտակցի, որ պարզամիտ, միակողմ ընկալումը այնքան էլ արդյունավետ չէ, որ նա կարողանա տեսնել իրականությունը այլ մարդկանց աչքերով: Սա կօգնի նրան ոչ միայն զուտ տեղեկությոն ստանալիս տրամաբանել, նաև կօգնի նրան այլ մարդկանց հետ չվիվելիս:

Մենք շատ հաճախ գնում ենք կոնֆլիկտների, գնում ենք լարվածության ընդամենը չընկալելով, որ կարող է լինել այլ տեսակետ, որ ուրիշը կարող է այլ կերպ մտածել: Որքան ավելի լայն է մտածողության հնարավոր տարբերակների երեխայի ընկալումը, ընկալումների զանազանությունը, որքան ավելի մեծ է, այնքան ավելի հանգիստ և առողջ մտածողություն ունի:

Հաջորդ կետը, որ էլի լավ է գործում և շատ կարևոր է, պետք է կոտրել կարծրատիպերը: Մենք բոլորս անընդհատ մտածում ենք կարծրատիպերով: Դրանք օգտակար են, այնպես չէ, որ մեզ չեն օգնում, ամեն դեպք չէ, որ պետք է մանրամասն վերլուծենք, ու շատ հաճախ այդ կարծրատիպը աշխատում է և հեշտությամբ հնարավորություն է տալիս մեզ պարզ որոշումներ կայացնել այս կամ այն իրավիճակում: Սակայն որոշ դեպքերում այդ կարծրատիպերը մեզ խանգարում են, առավել ևս, երբ հարցը վերաբերում է կարևոր իրողության կամ թեմայի, որովհետև այս դեպքում արդեն մանրամասն ընկալումը շատ ավելի առողջ է և շատ ավելի ճիշտ արդյունքի է բերում, քան զուտ կարծրատիպային մտածողությունը: Օրինակի համար, պետք է խուսափել օգտագործել կամ հնչեցնել այն նա-

խադասությունները, որոնք սկսվում են բոլոր կամ բոլորը բառերով, որովհետև դրանց 99 տոկոսը կարծրատիպեր են ու սխալ պնդումներ: «Բոլոր կանայք ավելի թույլ են», «Բոլոր տղամարդիկ ավելի նախաձեռնող են» և այլն. այս բոլոր կարծրատիպերն անարդյունավետ են, չեն հանգեցնում որոշումների և հակասում են քննադատական տրամաբանությանը:

Հաջորդը պետք է մատնանշել մտածողության և տրամաբանության թերացումները, որոնք հաճախ հանդիպում են մեր կյանքում: Նշեն կարևորներից մի քանիսը: Առաջինը հաստատման կողմնակալությունն է: Կա նման մտածողության խնդիր, երբ մենք ունենք որոշ պատկերացում և այն իրողության մեջ, որ մենք դիտարկում ենք, տեսնում ենք միայն այն փաստերը, որոնք հաստատում են մեր պատկերացումը: Այսպես, շատ հաճախ մարդիկ շատ վստահավոր բաներ են անում, օրինակ՝ օդաչուները: Եղել են դեպքեր, երբ սխալ տեղում են վայրէջք կատարել՝ ելնելով զուտ նրանից, որ դա է վայրէջքի տեղը, և փնտրել են միայն այն շրջակա միջավայրի առարկաները կամ տարածքները, որոնք հաստատում են, որ դա հենց իրենց վայրէջքի տեղն է, ու արդյունքում սխալվել են: Սա՛ առաջին: Երկրորդ՝ շատ հաճախ հանդիպող թերացումը սրանից հետո, ուրեմն, սրա պատճառով թերացումն է: Այսինքն՝ պատճառահետևանքային կապերը, որոնք մենք գալիս ենք՝ դիտարկելով ընդամենը ժամանակի մեջ (երեկ երեկոյան դուռը բացեցինք, քամի փչեց տանը, առավոտյան ես փռչտացա, նշանակում է՝ ես երեկ մրսել եմ: Կամ՝ երեկ շատ աշխատեցի, այսօր առավոտվանից գլուխս ցավում է): Տրամաբանական թվացող այդ բոլոր եզրակացությունները իրականում թերացումներ են: Չի կարելի այդպես մտածել: Դուք երբեք չգիտեք, թե որն է պատճառը, եթե չեք կատարել որոշ ուսումնասիրություններ: Ընդամենը ելնելով նրանից, որ մի ինչ-որ բան նախկինում եղել է, ու ձեր պատկերացմամբ դա կապված է այսօրվա փաստի հետ, մտածողության թերացում է: Երրորդը փաստարկումից անձին անցնելու անցնելն է: Կարող եք չվստահել անձին, եթե հարցը վերաբերում է այդ անձից եկող փաստերին: Կարող եք համարել, որ անձը կողմնակալ է և ներկայացնում է փաստը սխալ կամ կողմնակալ կերպով՝ փաստի մեջ ընդգծելով միայն այն, ինչ իրեն է պետք: Սա ճիշտ տրամաբանությունն է: Բայց սխալ է, երբ մարդ ինչ-որ բան փաստարկում է, դուք փոխանակ նրան ուշադիր լսեք ու ընկալեք, փորձում եք նրան վերագրել ի սկզբանե թերի դիրքորոշում և բոլոր փաստարկները մերժել՝ ելնելով նրանից, որ հենց այդ ամեն է դա ասում: Եթե դուք ընդամենը պասիվ եք դա անում, սա դեռ կես խնդիր է, բայց եթե հակադարձում եք, ասելով՝ դու ո՞վ ես, որ նման բան ասես, կամ՝ ես քեզ չեմ հավատում, երբ մարդը ոչ թե փաստ է ասում, այլ փաստարկ է բերում, արդեն խոր խնդիր է:

Հաջորդը շատ հաճախ հանդիպող անտեղյակության թերացումն է, երբ մարդն ասում է՝ ես դա չեմ տեսել, ուրեմն՝ դա չկա, դրա մասին չեմ լսել, ուրեմն՝ նման բան գոյություն չունի: Ինձ այդպիսի բան չեն ասել, նշանակում է՝ դա այդպես չէ: Սա շատ հաճախ է հանդիպում, և ցավոք, շատերը մեզանից անընդհատ հայտնվում են այդ խնդրի առաջ:

Հաջորդը հաճախ հանդիպողը հապճեպ ընդհանրացումն է: Ես տեսել եմ այսպիսի մի բան, նշանակում է՝ բոլոր դեպքերում դա այդպես է: Երեկ երկու ռուս այստեղ ծխում էին, նշանակում է՝ բոլոր ռուսները ծխում են և այլն: Այսպիսի հապճեպ ընդհանրացումներն անընդհատ թերացումներ են: Եվս մի թերացում դրանց երկար շարքից. դա սուտ երկրորդական է: Օրինակ, մարդը պետք է լինի ուժեղ, թե՛ առողջ: Կամ՝ պետք լավ ուտե՞լ, թե՛ միտքով: Նման բաները սովորաբար սուտ երկրորդականներն են:

Այս մի քանի օրինակները շատ հասկանալի են և հեշտ ընկալելի, որ դրանք թերացում են: Բայց լինում են շատ ավելի նուրբ դեպքեր, երբ մենք կարծում ենք, երբ մենք իսկապես երկրմտարանքի առջև ենք կանգնած, բայց իրականում այդպես չէ:

ԸՆԹԱՑ

ԱՆՑՅԱԼԸ ԴԻՇԵՆՔ, ԲԱՅՑ ԿԱՅԱՑՔՆԵՐՍ ՈՒՂՈՆՔ ԴԵՊԻ ԱՌԱՋ



տինըյան է ստացվել:

- Երբ ծնվել է Յարուբի դպրոցի վերաբացման մտահղացումը, մեր փոխտնօրեն տիկին Ղուլյանը, որը Դրախտիկի դպրոցի տնօրենն է եղել և նույնըբերից արդեն Արցախում էր, շրջել է Ստեփանակերտի բոլոր դպրոցները ու աշակերտներին տեղյակ պահել այդ մասին: Այո, նախնական փուլում այդ աշխատանքը կատարվել է, բայց արդեն լսելով, տեսնելով՝ 2021-2022 ուստարում առանց քարոզչական աշխատանքի են երեխաները եկել: Եվ աշակերտների քվի ածի հետ ձևավորեցինք նաև հոսքերը՝ բնագիտական և հումանիտար, ինչպիսին դպրոցը եղել է Յարուբում:

- Սովորաբար մեծերից շատ բան է կախված, որ երեխաները թթափեն անկումային տրամադրությունը, լինեն ուրախ, երջանիկ, բայց այս դեպքում կարծես երեխաներն են ավելի շատ օգնում մեծերին՝ դուրս գալ այդ հոգեվիճակից:

- Երեխաների շնորհիվ է, որ մեր գործը սկսվեց, և ամեն անգամ այն զգացումը, որ դասարանն են մտնում և պետք է պատրաստ լինեն երեխայի ցանկացած հարցի պատասխանը տալու, ինչու չէ, նաև քաղաքական իրադրության հետ կապված, ստիպում էր մեզ չթուլանալ: Այո, այս պարագայում երեխաները մեզ կյանքի կոչեցին, և, միմյանց օգնելով, կյանք վերադարձանք:

- Գլխավոր ի՞նչ խնդիրներ կառանձնացնեիք:

- 3. 3 դպրոցում մենք գործում ենք երկրորդ հերթ, ինչը մի շարք խնդրներ է առաջացնում: Յարուբի մանկապարտեզն այս տարի 47 նախադպրոցական խմբի երեխաներ է թողարկելու, ու եթե մեր շենքային պայմանները մերեմ, գրո (0) երկու խումբ կգործի մեր դպրոցում: Ակնկալում ենք, որ մեր ուսումնական մասնաճյուղը տրված խոստում պետք է գործ դառնա, որովհետև մենք այդ ձևով ենք սովոր պարել: Առաջին տարին մի քիչ հեշտ էր նրանով, որ 180 աշակերտ էր, բայց 316-ի պարագայում դասարաններն արդեն բազմամարդ են՝ 25 և ավելի աշակերտ: 3. 3 դպրոցում դասասանյակները փոքր են, երկ նախատեսված են եղել քիչ թվով աշակերտների համար: Եվ հիմա մեր դասարաններում եթե բացակա չի լինում, աշակերտները ստիպված են լինում 3 խումբում, ուսուցիչն ուրախանում է, որ կարող է թեմատիկ գրավոր տալ այդ օրը: Բացի այդ, եթե մենք ունենանք առանձին շենք և աշխատեցնեք առաջին հերթով, ինքնըստինքյան կլուծվի նաև Յարուբի արվեստի դպրոցի հարցը, որը կարող է երկրորդ հերթով աշխատել մեր շենքում: Ինչու չէ, կաջակցենք նաև Յարուբի ՄՊՄԿ-ի գործունեությանը, որտեղ հիմա պարավունքներն սկսվում են ժամը 5-ից հետո, և

միմյանց խանգարում ենք: Փաստորեն մեզ շենք տրամադրելով՝ Յարուբի երեք կրթօջախների հարցը կլուծվի, ու նաև այն կդառնա հարողուցիների հավաքատեղի, և կարելի է շրջանի մասշտաբով միջոցառումներ, հավաքներ, հանդիպումներ կազմակերպել: Մեր հիմնական խնդիրն այս պահին դա է: 3. 3 դպրոցի կուլտիվը մեզ շատ լավ է վերաբերվում, ամեն հարցում աջակցում է, բայց մենք ինքներս զգում ենք, որ նեղություն ենք պատճառում այդ մարդկանց: Յարուբի կարգավիճակով շատ երկար մնալը երևի ոչ մեկին էլ հաճելի չէ:

- Երբ դպրոցը նոր էր վերածակվել, այսպիսի միտք է հնչել. որ քանակական խնդիրներ լուծելուց կարճ ժամանակ հետո դպրոցի գլխավոր խնդիրը պետք է դարձնեք նրա որակական նշածողի բարձրացումը: Գաղտնի լինի ի՞նչ:

- Չնայած նշած մեծ խնդիրն, այս ուսումնականում գրանցել ենք բավականին հաջողություններ: Նախ ասենք, որ մենք ակտիվ դպրոցական կյանք ենք վարել: Մասնակցել ենք հանրապետական բոլոր միջոցառումներին՝ օլիմպիադաներ, շարադրությունների, նկարների, սանունքի մրցույթների, ռազմամարզական միջոցառումներ ճանապարհային տեղեր գրավել: Առարկայական, միջոցառումային միջոցառումներ, ընթերցանության, գրքի շաբաթ անցկացրել, պարզապարզվել ենք ԱՅԿՄՍՍ-ի կողմից: Գրադրության մրցույթներին ենք մասնակցել ու երկու անգամ 2-րդ տեղ գրավել: Ուստարվա ընթացքում դպրոցն արժանացել է 5 դիպլոմների: Կառանձնացնեի Մայիսյան տոներին նվիրված միջոցառումներին մեր մասնակցությունը: Մեր սանը նախադրության կողմից 1-ին կարգի դիպլոմի է արժանացել նկարչական մրցույթում, իսկ մեկ աշակերտ՝ պատվոգրի: «Շիրակացու մեծարան»-ի կազմակերպած օլիմպիադայից ունենք երեք 3-րդ կարգի դիպլոմ բնագիտական, հայոց և ռուսաց լեզուներից և ինը գովաասնագիր՝ հայոց և ռուսաց լեզու առարկաներից:

Օրացուցային բոլոր տոն և հիշարժան օրերի առթիվ դպրոցում կազմակերպել ենք միջոցառումներ՝ սկսած հենց տարվա սկզբից. ամանորյա հանդեսներ, Մայրենիի օր, Մայրության և զեղեցկության օր, Անկախության օր, Ուսուցչի օր և այլն, կլոր սեղան ենք կազմակերպել Ասկերանի պաշտպանական շրջանի սպաների ու զինվորների հետ՝ «Այսօրվա դպրոցականը վաղվա զինվորն է» խորագրով, որին մասնակցել են 11-12-րդ դասարանների աշակերտները: «Արիության դաս» ենք կազմակերպել Մայիսի 9-ի կապակցությամբ: Յարուբի մասնակցությունը, Ե. Չարենցին, Գամա Սահյանին նվիրված առարկայական միջոցառումներն ենք բարձր մակարդակով անցկացրել, զուգահեռ դասարանների միջև կազմակերպել ենք խաղ-մրցույթներ բնագիտական առարկաներից, մայրիկների տոնին

նվիրված 6-րդ դասարանների աղջիկները՝ «Յապա, աղջիկներ»: «Ձորաց ակունք»-ի կողմից կազմակերպված Քուեստ խաղին է դպրոցի թիմը մասնակցել, Ազգային պարի մրցույթին: Թանգարանների միջազգային օրվան նվիրված՝ կազմակերպել ենք աշակերտների այցելությունը Արցախի պատմաերկրագիտական թանգարան:

Յարուբի ենք անցկացնում ընթերցանության մարտն: Մանկական գրքի շաբաթին նվիրված՝ ապրիլի 2-8-ը և նախորդ ուսումնականում, և այս տարի կազմակերպել ենք բարձրածայն ընթերցանություն, որին մասնակցել են ուսուցիչներն ու աշակերտները: Ընտրված ենք որևէ հեղինակ: Իսկ այս տարի տարրական դասարանների երկու դասվար և 5-րդ դասարանի հայոց լեզվի ուսուցչուհին կազմակերպել են հեթիաթների քննարկում ու բեմականացում:

Օրացուցային ոչ մի տոն և հիշարժան օր բաց չենք թողնում: Կազմակերպել ենք տոնանքի նվիրված Յուրի Պողոսյանի ծննդյան օրվան, առհասարակ, հերոսներին նվիրված տոնանքի հաճախակի ենք ունենում:

Չենք ուզում ոչ մի բանից անմասն մնալ, որպեսզի մեր երեխաները իրենց օտարացած չզգան: Ուսուցիչներն էլ ամենայն նվիրվածությամբ աշխատում են՝ մի կողմ դրած սոցիալական խնդիրները:

- Կարո՞ղ ենք ասել, որ ներկայում նույն բարձրության վրա եք, ինչ Յարուբում էիք:

- Եթե մեր ուսումնականում լավ արդյունքներ ունենանք նաև առարկայական օլիմպիադաներում, կասեն՝ այո:

- Կապ ունե՞ք 37-ում մնացած ձեր գործընկերների հետ: Ի՞նչ մտադրություն ունեն նրանք:

- Ուսուցիչներն իրար հետ են կապ պահում, աշակերտները՝ ընկերների հետ: Ցավոք, կրթական համակարգում այնտեղ տեղավորված են շատ քիչ թվով մասնագետներ: Ասում են, որ Արցախի չվերադառնալու պատճառն այստեղ ապրելու տեղ չունենալն է: Ես գտնում եմ, որ բոլոր այստեղ ապրողներս հերոսներ ենք: Բայց չեն ընդունում, որ պետք է տարիներ շարունակ ապրենք տեղահանվածի խարանով: Ես ինքս չեմ ընդունում, որ այդ բանի շնորհիվ մեզ բարոյություն անեն: Անցյալը հիշենք, բայց հայացքներս դեպի առաջ ուղղենք: Կարծում եմ, որ առաջ մղող հիմքերից մեկը կրթությունն է: Այլևս ժամանակ չունենք, համակարգում այնպիսի բարեփոխումներ են անհրաժեշտ, որ երկիրն ունենա գրագետ, բազմակողմանի բանիմաց քաղաքացիներ: Սա է մեր հաղթանակների գրավականը: Չեխտվեմ ասում է. «Գեղեցկությունը կիրկի աշխարհը»: Մեր պարագայում՝ խելքը կիրկի Արցախը:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՑԱՒՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻՆ



ԱՅ ԿԳՄՍՆ և Բյուրականի աստղադիտարանի համագործակցության շրջանակում արդեն երկու տարի է՝ Բյուրականում կազմակերպվող ամառային մաթեմատիկական ճամբարին մասնակցում են դպրոցականներ Արցախից:

Ինչպես տեղեկացանք ԱՅ ԿԳՄՍՆ արտադպրոցական ծրագրերի բաժնի վարիչ Արմեն Պետրոսյանից, ճամբարին Արցախից ընդգրկվել է 22 հոգի: Մաթեմատիկական ճամբարը կազմակերպվում է աշխարհահռչակ գիտնական, աստղաֆիզիկոս Վիկտոր Գամբարձումյանի թոնուկներ ԱՄՆ-ում Գամբարձումյանի և Գալինա Պանինայի նախաձեռնությամբ: Աշակերտների ընտրությունը կատարվել է առցանց եղանակով՝ 8-12-րդ դասարանների աշակերտների միջև, Բյուրականի աստ-

ղադիտարանի կողմից կայքում տեղադրված առաջադրանքների լուծման արդյունքներով: Պարտադիր պայման է նաև մասնակիցների ռուսերենի իմացությունը, քանի որ դասընթացները վարում են Մոսկվայից հրավիրված պրոֆեսորները: Ա. Պետրոսյանի տեղեկատվությամբ՝ ընտրված աշակերտների մեծ մասը ֆիզմաթ դպրոցից է, կան նաև Ստեփանակերտի մյուս և շրջանների դպրոցներից մասնակիցներ:

Մաթեմատիկայի և ֆիզիկայի դասընթացներից բացի, ճամ-



բարականները ծանոթանում են Բյուրականի աստղադիտարանի նվաճումներին, աստղադիտում են կատարում, Վ. Գամբարձումյանի կյանքի դրվագներին ծանոթանում նրա տուն-թանգարանում:



Գիտական մասից բացի ունեն նաև հետաքրքիր ժամանցային առօրյա արշավների, լեռնամագլուցումների, լողի, տարբեր մասնագիտությունների հետ մարդկանց հետ հանդիպումների, Դայաստանի տեսարժան վայրեր այցելությունների տեսքով:

Ա. Պետրոսյանը տեղեկացրեց, որ երեխաների ճամբարի ավարտից հետո Բյուրականում դասընթացներ կկազմակերպվեն նաև մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչների համար, և ԱՅ ԿԳՄՍՆ-ն Բյուրականի աստղադիտարան կգործողի համապատասխան մասնագետներին:

Սեփ. լրատվություն

ՆՎԻՐՈՒՄ

БАБУШКЕ - 90



Елена Самсоновна или товарищ Манасян - так называют бабушку жители сел Параватумб и Кагарци Мартунинского района Арцаха, где она почти полвека преподавала русский язык и литературу в школе.

На протяжении всей своей жизни мы чувствовали ее любовь, заботу и поддержку. Она часто рассказывает о своей молодости, но не любит вспоминать про сталинские годы и ссылку на Алтай.

После - возвращение в родную деревню, Великая Отечественная, работа в школе, замужество, дети. Пара десятков спокойной жизни и опять война и трудности.

Если охарактеризовать её несколькими словами, бабушка - честная, строгая, с чувством собственного достоинства, которое она не теряла никогда и ни при каких обстоятельствах.

быть в курсе политических событий, решать кроссворды и сокрушается, что так и не выучила английский язык. Несколько лет назад попыталась освоить YouTube.

Бабушка не терпит сплетни и может в лицо сказать, что это некрасиво и "чтобы при мне никогда больше не сплетничали о других."

Когда в 2020 году началась война, бабушка была твёрдо уверена, что мы выстоим и до конца октября отказывалась покидать деревню. На второй фотографии она с семимесячной правнучкой в Ереване, всё ещё полная оптимизма, но остро переживающая потерю стольких молодых жизней.

Вот так моя бабушка Лена всегда призывает не унывать, не сдаваться и следовать своей мечте. Для меня она - пример стойкости и непоколебимости духа, символ арцахского долголетия.

найдётся что-то вкусное, что-то старинное и интересное.

С возрастом замечаю, что мы с ней довольно похожи. Нас объединяет большая любовь к литературе и привычка переживать по-всякому поводу. Мы любим перечитывать "Анну Каренину" и вместе смотрели теннисные матчи по телевизору.

Сегодня у моей любимой бабушки с самыми милыми ямочками на щеках юбилей. Она с утра получает поздравления и говорит, что не верит, что ей уже столько лет.



Сегодня опять соберутся её родные, поздравят и поблагодарят за все. А она? Она возьмёт бокал вина, помолчит и скажет то, что говорит всегда: "Чтобы не было войны. Не хочу видеть, как погибают молодые."

Бабушки и дедушки позволяют нам в любом возрасте чувствовать себя маленькими детьми. Время, проведённое с ними, бесценно. Желаю всем дожить до возраста моей бабушки и вдоволь насладиться общением с внуками.

Гаяне АЙРАПЕТЯН

Հնորհավորանք

ԿՅԱՆՔ՝ ՆԱԳԵՅԱՑ ԱՎՆԱԾԱՆԵՐՈՎ ՈՒ ՍԻՐՈՎ



Ուսուցիչը հպվում է հավերժությանը:

Ոչ ոք չի կարող ասել, թե երբ կավարտվի նրա ազդեցությունը: Դենրի Ադամս

Ընկեր Մանասյան, կամ Ելենա Սամսոնովնա. ահա՛ հավերժությանը հպված այն ուսուցիչը, ում մանկավարժական ազդեցությունը երբեք չի թուլանում (ավարտվելու մասին խոսք լինել չի կարող)...

Մանկավարժ՝ ի վերուստ դատապարտված այդ վեհ առաքելությանը... Արդեն վաղուց բոլորիս սիրելի ընկեր Մանասյանը անցել է վաստակած հանգստի՝ էսպես մնալով ուսուցիչ՝ մանկավարժական հարուստ կենսափորձով և անչափ լուսավոր հետազոծով:

Մարդկային բարձր հատկանիշներով օժտված, դժվարություններից չընկրկող, բնավորությամբ անհանգիստ, բայց հոգով պարզ ու շիտակ այս կին-ուսուցիչը անխնայ սերմնացանի նման շուրջ հինգ տասնամյակ իր հոգու շռայլ լույսն ու կրակը, հարուստ գիտելիքները մեծագույն սիրով ու վարպետությամբ փոխանցել է իր սաներին՝ ռուս գրականության նկատմամբ պայծառ սեր ու հետաքրքրություն սերմանելով նրանց ուսումնասուն հոգիներում: Իր մասնագիտությանն անսահման նվիրված այս ուսուցչուհու վարած յուրաքանչյուր դաս ինքնամոռաց նվիրում էր: Դասավանդել է խանդավառված՝ խանդավառելով նաև աշակերտներին, նրանց առջև բացել ռուս գրականության անբավ հարստությունները, սաներին կրթել, դաստիարակել՝ միշտ լինել ազնիվ, շիտակ, արդարադատ ու հայրենասեր, լինել իսկական արցախցիներ... Ու ի դեմս սաների՝ հպարտանալու առիթներ շատ ունեցավ...

Միշտ վեհ ու առաքինի կերպարով, օրինակելի պահվածքով ու կեցվածքով, նվիրումով աշխատելու, պատասխանատվության բարձր զգացումի, մարդկային շիտակ նկարագրի շնորհիվ նա վաստակել է բոլորի հարգանքն ու համակրանքը:

Եվ հիմա Ելենա Սամսոնովնան բոլորել է իր իմաստալից կյանքի 9-րդ տասնամյակը:

Երջանիկ մայր՝ շրջապատված երեք կիրթ ու դաստիարակված զավակներով, խելացի ու հայրենասեր թոռներով, տաղանդավոր ու շնորհաշատ ծոռներով և, որ ամենակարևորն է՝ իր հարյուրավոր սաների հարգանքով ու հոգածությամբ...

Սիրելի՛ ընկեր Մանասյան, մեզ համար մեծ ու անկրկնելի ուսուցիչ, լավագույն խորհրդատու և զրուցակից, շնորհավոր հորեյվանդ:

Քաջառողջություն ու խաղաղ կյանք ենք մաղթում քեզ: Թող միտքդ միշտ մնա այդպես պայծառ, կերպարդ՝ վեհ, սիրտդ՝ բարի, ցանկություններդ՝ կատարվող... Վերստին երջանկություն և առողջություն Ձեզ: Խորին հարգանքով և անափ սիրով՝

Վաղարժու միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՍՏՐԿԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐՉ ԴՊԱՅԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ այլ հմտություններ են պետք ձևավորել երիտասարդի ու երեխայի մոտ: Հարկ է սովորեցնել բոլոր մտքերն սկսել «ես կարծում եմ», «ես մտածում եմ» բառերով: Ինչո՞ւ է սա կարևոր: Քանի որ երբ անձը իր սեփական ասածի կամ մտածածի նկատմամբ սովորում է լինել զգոն, քննադատաբար վերաբերվել, չպնդել որպես բացարձակ ճշմարտություն, նա նաև մյուսների ասածն ընկալում է նմանապես որպես հետաքրքիր միտք, բայց ոչ որպես բացարձակ ճշմարտություն:

Եվ վերջապես ամենակարևոր գործիքը, որն ընդհանրապես մարդուն օգնում է գարգանալ, բայց նաև քննադատաբար մտածել,

ինքնաանդրադարձն է: Մենք պետք է սովորենք անընդհատ ուշադրություն դարձնել մեր սեփական ընկալումներին: Պետք է մեր սեփական գործողություններին ուշադրություն դարձնենք, վերլուծենք, դիտարկենք մեր արածը մնացածների ընկալումների լույսի ներքո, լսենք, թե այլ մարդիկ ինչ են մտածում մեր ասածի կամ արածի մասին: Այս դեպքում, եթե խոսքը վերաբերում է քննադատական մտածողությանը, պետք է անընդհատ ուշադրություն դարձնենք մեր սեփական ընկալմանը: Այսպես, տալով մեզ հարցեր, թե ինչու այսպես մտածեցի, ինչու ես այսպես ընկալեցի, էլ ինչ տարբերակներ կան, արդյոք սա զուտ հուզական արձա-

գամք է, թե՛ բովանդակային և այլն: Այս բոլոր հարցերը մենք պետք է սովորենք տալ, քանի դեռ երեխան չի սովորել: Պետք է այս հարցերը տաք նրան և սովորեցնենք, որ նա այդ հարցերը կարողանա տալ ինքն իրեն ու դրանց պատասխանները գտնել: Քննադատական մտածողությունը կրթության հ. 1 նպատակներից պետք է լինի, այն պետք է կարևորվի բոլոր ուսուցիչների, ծնողների, կրթական ծրագրեր ձևավորող, դասագրքեր գրող մարդկանց կողմից, դասագրքի հեղինակը չպետք է փորձի լինել բացարձակ հեղինակություն, դրան հակառակ՝ պետք է անընդհատ դրդի երեխային, որ նա հարցեր տա, կասկածի, թե արդյո՞ք սա այսպես է և ինչո՞ւ,

ու փորձի գտնել դրա պատասխանը: Քննադատական մտածողությունը միայն պաշտպանվելու գործիք չէ, այն ակտիվ գործելու, զարգանալու, նոր տեղեկություն ընկալելու, հետաքրքրված լինելու, պատճառներ փնտրելու, հետազոտելու հիմնական միջոցն է: Եվ եթե ուզում ենք ունենալ սերունդ, որը կզարգացնի գիտությունը, կապրի ավելի լավ կյանքով, սթափ կընկալի իրականությունը, կգործի ըստ իրականության, ոչ թե սեփական երազանքների կամ թյուրընկալումների, մենք պետք է բոլորս պատասխանատու լինենք, որ մեր երեխաները ձեռք բերեն քննադատական մտածողություն:

Աղբյուրը՝ CivilNet.am

ԲՈՒՎ

ԿԱՅԱՑԱԿ ԱՐՊՉ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀՐԱԺԵՑԻ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ


2021-2022 ուստարում Արցախի պետական համալսարանը թողարկել է առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի 356 և մագիստրատուրայի 145 շրջանավարտ: Շրջանավարտների դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությունները, ըստ ֆակուլտետների, տեղի ունեցան ԱրՊՉ պուրակում՝ զոհված ուսանող-ազատամարտիկների հուշակոթողի մոտ:

Շրջանավարտների հրաժեշտի եզրափակիչ արարողությունը տեղի ունեցավ հունիսի 17-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում, որին ներկա էին ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Գևորգյանը, օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչներ, համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմն ու ուսանողները: Միջոցառումը մեկնարկեց լուսային ռուպեով՝ ի հիշատակ հանուն հայրենիքի պաշտպանության պատերազմներում անմահացած քաջորդիների:

ԱրՊՉ շրջանավարտներին բուհն ավարտելու առթիվ շնորհավորել և իր բարեմաղթանքն է հղել ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Գևորգյանը: «Այսօր, երբ վտանգված է մեր ազգային ինքնությունը, անչափ կարևոր է պահպանել մեր արժեհամակարգը, իսկ այն կարող ենք անել ազգային ու պետական շահերին համահունչ սերնդակրթություն ապահովելով, մեր բարոյական ու հոգևոր նորմերը պահպանելով: Մեր ազգային ինքնության պահպանման ճանապարհին մեծագույն հաջողություններ են մաղթում մեր շրջանավարտներին»,- նշել է նախարարը: ԱրՊՉ ղեկավար Արմեն Սարգսյանը, շնորհավորելով շրջանավարտներին, խոսել է համալսարանի այս ուստարվա շրջանա-

վարտների,-բուհական կրթության ժամանակաշրջանում համալսարանի դժվարությունների մասին՝ պայմանավորված համավարակով, գլխավոր մասնաշենքի վերանորոգման աշխատանքների հետ կապված շենքային սուղ պայմաններով, պատերազմով, ընդգծել բուհի արձանագրած հաջողությունները՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում, հիմնադրույթով շենք, ուսումնագիտական առաջընթաց, կարևորելով ԱրՊՉ-ի դերն ու նշանակությունը՝ որպես Արցախի մայր բուհ և շենտադրել այն երկրի համար բարձրորակ մասնագետներ թողարկելու ու հիմնական կադրային բազա ապահովող կրթական հաստատություն լինելու տեսանկյունից:

րագնահատեք ձեր նախորդների կատարածը: Երբ ինձ հարցնում են, թե որն է մեր հաջողության գրավականը, ես միշտ պատասխանում եմ, որ ԱրՊՉ ղեկավարող իր որոշումները միշտ կայացնում է՝ հենվելով նա-



«Արցախի մայր բուհը 53 տարվա պատմություն ունի, որի ընթացքում բուհը թողարկել է շուրջ 25.000 շրջանավարտ: Այսօր նրանց շարքը լրացվում է ևս 500-ով: Որտեղ էլ լինեք, երբեք չմոռանաք Արցախը, ԱրՊՉ-ն: Ինչ պաշտոններ էլ զբաղեցնեք, երբեք չթե-

խորդ ղեկավարների կատարած աշխատանքի վրա»,- նշել է ղեկավարը: Շրջանավարտ Պարույր Մարտիրոսյանը, շնորհավորելով շրջանավարտներին, շնորհակալական խոսք է հղել համալսարանին. «Համալսարանի ղեկավար մարմինները, բոլոր պատասխանատու ստորաբաժանումները բարձր պատասխանատվությամբ ու որակով են կատարել իրենց բաժին առաքելությունը: Ամեն կերպ փորձ է արվել հաղթահարել բոլոր փորձությունները ու չեզոքացնել ցանկացած բացասական ազդեցություն, որոնք ի հայտ եկան նախ համավարակի, այնուհետև՝ պատերազմի հետևանքով: Մեզանից յուրաքանչյուրը պիտի ստանձնի իր մասնագիտական բաժնի պատասխանատվությունը, և սա է ամենակարևորը: Հավատում եմ, որ այսուհետև ևս մենք կկարողանանք միասնական ուժերով հաղթահարել բոլոր փորձությունները»:

Կանգնել եմ շիրմաքարի առաջ: Արթուրն իր բարի, քնքուշ հայացքով ինձ էր նայում, աչքերի մեջ արև կար, ոսկեվարս արև, որի ցոլանքները ջերմացնում են շրջապատը: Երանի՛ թո աչքերին, որ այդքան արև ունես ամբարած, երանի՛ թո հայացքին, որ կտրում-անցնում է ողջ հորիզոնը, անծիր երկինքը: Հայացքիդ մեջ ապրելու տենչանք կա, ձգտում, հավերժություն... Խաչվում են մեր հայացքները, և ես խոնարհվում եմ, խոնարհվում թո հավերժության առաջ: Հոգուս պոռթկումն անգամ ոչինչ է թո լուռ վեհության առաջ, ուստի լռում եմ՝ թո հավերժ խաղաղությունը չխանգարելու համար:

Կանգնել եմ շիրմաքարի առաջ ու լուռ խոսում եմ նրա հետ, փորձում դաս հարցնել, խնդրում եմ պատմել հայրենիքի մասին սերտած դասը: Նա էլ ինձ հետ էր լուռ խոսում և, լուռ կանգնած միմյանց դեմ, ես՝ կենդանի մարդու, և հուշարձան դարձած սանն լրիվությամբ հասկանում եմ իրար, հասկանում ու ներում իրար: Նրա լռության մեջ իր պարտքը հայրենիքի նկատմամբ կատարողի խորհուրդ կա, ու այդ խորհուրդը խոր արմատներ ունի ձգած: Այն ուժ է առնում այն հողից, որից ծնվել է, որին խառնված է իր արյունը կաթիլ առ կաթիլ, որի գրկում հանգչում է...

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գ. ԵՄԻՉՃԱՆ

ՀԱՊՐՈՒԹԻ ՀԵՐՈՍ



Ես խոսում եմ հայրենիքի անձնվիրյալ զավակի՝ Արցախի հերոս, Պաշտպանության բանակի զնդապետ Սերգեյ Շաքարյանի հայրենասեր ընտանիքի՝ մոր, կնոջ, քաջարի զավակների անունից: Մեծագույն պատասխանատվություն է լինել զնդապետ Շաքարյանի գործի շարունակողը, ձգտել ապրել նրա նման, այո, ցավոք, ապրել այսուհետ նրա փոխարեն: Նրա ապրած կյանքը հայրենիքի համրեպ անսահման նվիրում էր, իսկ մահը՝ անձնվիրության անդառնալի կնիք:

Բոլորս էլ գիտենք Հայրուքի

թիվ նամակներ ենք ստացել նրա զինվորներից, անգամ՝ 15 տարի առաջ ծառայողներն են գրում: Մենք պարտավոր ենք նրանց գործը շարունակել: Նրանք կռվել ու զոհվել են հանուն մեզ, մենք պարտավոր ենք վառ պահել նրանց անունները և աշխարհին ցույց տալ հայի կամքն ու զորությունը: Մենք կորցրել ենք մեր տունը, հայրենիքը և ամենաթանկին՝ հորս: Հողը հետ կերես, տունը կկառուցես, բայց մարդկային կյանքից միայն հուշն է մնում: Թեկուզ թշնամու վերահսկողության տակ է Հայրուքը, մեկ է՝ մեր



զորամասի տղաների կատարած սիրամբների մասին, որոնք աննկարագրելի են, միայն ֆիլմերում էինք տեսել նման գործողություններ. նրանք կռվում էին՝ որ զուցե հաջորդ վայրկյանին կարող էին չլինել, կռվում էին, որովհետև իրենց կողքին ունեին Շաքարյանի նման հրամանատար:

«Ճակատագրի հեզմանքն էր ասես. հայրս մահացել է 2020 թվականի հոկտեմբերի 25-ին՝ 46 տարեկան հասակում. պապս՝ Արցախյան ազատագրական շարժման առաջամարտիկ Ալավիկ Շաքարյանը, 1993 թվականի նույն օրը՝ ճիշտ նույն տարիքում», - ասում է տղան: Սակայն հիշում է հոր վերջին գրույցը հեռախոսով. «Ձի՛գ մնա, դուխով մնա, կյանքում գլուխդ չկախես», - կարծես սիրտն ինչ-որ բան էր զուշակում: Դեպքը հենց դրա հաջորդ օրն էլ եղել է:

Ականջներիս մեջ հնչում է Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի խոսքերը. «Պարոն Շաքարյան, Ձեզ հարգում է ամբողջ ազգը, Ձեր սխարմըր գնահատելու է ամբողջ ազգը, Դուք իրական Արցախի հերոս եք»:

Ինչպես Սևակն է նշում. «Հայրս պարգևատրվեց «Ոսկե՛ արծիվ» շքանշանով և արժանացավ «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը: Հորս մահից հետո բազմա-

հայրենիքն է: Թեկուզ ունենք փոքր Արցախ, մասնատված Արցախ, որը շատ սպիներ ունի, մենք խոստանում ենք, որ կբուժենք ու հետ կվերադարձնենք մեր հայրենիքը»:

«Ու առանց մարդկային զոհերի, առանց պատերազմի, - լրացնում է Ալավան, - քանի որ նրանք, ովքեր մեզ հետ չեն, երազում էին ազատ ու անկախ Արցախի և զարգացած Հայաստանի մասին»:

Վերջում ուզում եմ ավելացնել, որ Շաքարյանները, ճիշտ է, կորցրել են իրենց ամբողջ ունեցվածքը, ամենաթանկ մարդկանց, բայց միևնույն է, մյուսներին գոտեպնդողներն իրենք են՝ արժանի հոր արժանի զավակները: Ստանալով հրամանատար հոր դաստիարակությունը՝ տղաները չեն կտորվում, նրանք գտնում են, որ պետք է առաջ մայեն, պարտավոր են պաշտպանել իրենց ընտանիքն ու հայրենիքը, իսկ հայրենիքի համար օրհասական պահերին, ինչպես մեծ գրող Մուրացյանն է ասում իր «Գևորգ Մարգարեպետ» վեպում, պետք է միաբանվել ու վեր կանգնել անձնական նկրտումներից՝ կարևորագույնը համարելով հայրենիքի շահը:

ՍԼԱՎԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
1-ԻՆ ՊԵ պահեստագործ
մայր

ՄԱՐԶԱԿԱՆ

ԻՆՔՆԱՃԱՆԱԳՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՀՄԱԿՈՒՄ



Մարզական էջի հետևորդները քաջ ծառայություններ են մեր հերթական գոյուցակցի հետ, որի հետ հաճելի հաղորդակցում ունենալու հնարավորությունները աշխատում ենք բաց չթողնել: Մարտարվեստների աշխարհում նրա շնորհիվ արձանագրվող իրադարձություններն են մասնավորապես մեզ տանում դոջո (ճապոներեն՝ վայր կամ մարզադահլիճ, որտեղ անց են կացվում մարտարվեստների պարապմունքներ, մրցույթներ, գոտու որակավորման քննություններ), որտեղ էլ առիթը բաց չենք թողնում հմուտ մարզիկի ելուցանանքը մարզչի հետ քննարկել մարտարվեստներին առնչվող հետաքրքիր հարցեր, ավելի խորը հասկանալ կատարելագործման տանող մարտիկի ուղին ընտրած մարզկանց, ստանալ օգտակար խորհուրդներ: Արցախի ավանդական կարատե-դոյոյի ֆեդերացիայի մարզիչ, սե Գոտի երրորդ դաս, Եվրոպայի չեմպիոն Տիգրան Գեորգյանն է «Մարզական»-ին հերթական հարցազրույց տվողը:

Մայիսի 27-28-ը Լեհաստանի Վրոցլավ քաղաքում կայացած ավանդական կարատե-դոյոյի աշխարհի զավթի խաղարկությանը մեծահասակների (21+) տարիքային կարգում Տիգրան Գեորգյանը մրցել է 4 մրցածեներում, որոնցից երկուսում գրավել է 2 մրցանակային տեղեր: Թիմային կումիտե մրցածեում զբաղեցրել է 2-րդ տեղ, իսկ անհատական կատա մրցածեում դարձել է 3-րդ տեղի մրցանակակիր: Աշխարհի զավթի առաջնությունն այն ստուգատեսն է, որին մասնակցելով ավելանում է փորձը, որպեսզի առաջիկա աշխարհի առաջնությանը համոզես զան ավելի վստահ:

- Տիգրան, գիտե՞ք, որ 4 տարեկանից սկսել եք պարապել ավանդական կարատե-դո մարտարվեստով Ձեր հոր՝ ճանաչված մարզիչ սենյե Արամ Գեորգյանի մարզական հովանու ներքո: Մինչև օրս հավաստարիմ մնալով բնորոշ սկզբունքներին՝ շարունակում եք գնալ նախընտրած ճանապարհով՝ մարտիկի ուղիով: Կարո՞ղ եք ասել՝ այն ժամանակվա եւ ներկայիս պարապմունքները նմա՞ն են իրար:

- Եթե խոսում ենք ավանդական կարատե-դո մարտարվեստի մասին, ապա պարապմունքները չեն փոխվում, քանի որ դրա հիմնական սկզբունքը հենց կարատեի ավանդույթները պահպանելն է բոլոր ժամանակներում: Բայց աշակերտների մոտ լինում են ելուցանումներ, որոնք փոփոխություններ են բերում: Երբ ընկրկվում են կարատեի աշխարհ, փոխվում են ոչ միայն մարմինը ու շարժումները, այլև նպատակները, մտքի ճանապարհը:

Սկսում ենք սպիտակ գոտուց, շարժվում ենք յուրաքանչյուր գոտի ստանալուն համապատասխան պահանջները կատարելու նպատակով ու չենք շեղվում մեր նպատակից: Գոտիները մոտիվացիա են տալիս, որպեսզի դրանցից յուրաքանչյուրի ծրագիրը կատարելով, ընդ որում, թե՛ ինքնապաշտպանության տեխնիկան, թե՛ այն բոլոր վարժությունները, որոնք զարգացնում են ֆիզիկականը՝ շերտ առ շերտ բարձրանալ վերել: Հասակ առնելով կյանքում, հասունանալով

կարատեում՝ ավելի գիտակցաբար են սկսում նայել կարատեին ու գիտակցաբար էլ կատարում են առաջադրանքները: Եթե փոքր հասակում կարատեն դիտում էիր որպես հետաքրքիր ժամանց, ֆիզիկապես ակտիվ լինելու լավ ձև, մրցույթներին մասնակցելու եւ հաղթելու լավ միջոց, ապա հասունանալով նայում են եւ որպես առողջ ապրելակերպի, եւ ինքնապաշտպանություն սովորելու, եւ դաստիարակության, հոգեւոր ու մտավոր զարգացման ուղու: Մրցաշարերն էլ են ստիճանով տալիս, որ ավելի կատարելագործվես մարտարվեստում, անկախ նրանից, հաղթո՞ւմ ես, թե՞ պարտվում:

- Ե՞րբ սկսեցիք գիտակցել, որ սպորտն ու մարտարվեստը տարբեր բաներ են:

- Մտավորապես 14 տարեկանում, երբ շուրջ 9 տարվա մարզվելու փորձ ունեի հասկացա ու սկսեցի առանձնացնել սպորտը մարտարվեստից: Սպորտին նայում էի որպես մրցույթի եւ ֆիզիկական ցուցանիշների բարձրացման, իսկ մարտարվեստին՝ ինքնապաշտպանության: Ժամանակին կարատե-խտներն օգտագործում էին իրենց հմտությունները՝ պաշտպանվելու ու կյանքը փրկելու համար: Այն շարժումները կամ հնարները, որոնք սկսեցինք սովորել պարապմունքների ընթացքում, մեզ համար բացահայտեցին մարտարվեստի լրջությունը, որ կարելի է խոցել դիմացինին, մարտը ավարտել մեկ հարվածով: Մրցաշարերն առանձնանում են նրանով, որ մրցման կանոններն արգելում են կարատեն օգտագործել իր դասական ձևով: Հմտանալով կարատեի մեջ՝ աստիճանաբար սկսում է գործել գիտակցված ինքնահսկումը, որը թույլ չի տալիս սովորածը օգտագործել ի վնաս չէլ կամ դիմացինին: Այլապես մարտը կվերածվի արյան ծարավի, արյունաբերության: Ինքնաճանաչումը եւ ինքնահսկումը մարտարվեստի միջոցով ձեռք բերվող կարեւորագույն հմտություններն են, որոնք պետք են զալիս նաեւ մրցաշարերին մասնակցելիս:

- Ավանդական կարատե-դո սովորելիս սաները կարո՞ղ են, արդյոք, ազատ հարցեր ուղղել մարզչին, թե՞ առաջնորդվում եք «Լճիք եւ կատարի» սկզբունքով:

- Կարատեում չկա մարզիչ հասկացություն: Կա սենյե, որ ճապոներենից թարգմանաբար նշանակում է՝ ուսուցիչ: Ելնելով այդ գաղափարից, պարապմունքների ձեւաչափերն ընթացում են տարբեր ձեւերով: Ուսուցիչը սովորեցնում է թե՛ բառերով, թե՛ տեսական գիտելիքներով, թե՛ ֆիզիկական վարժություններով: Աշակերտը գիտելիք ստանալու առումով ազատ է իր ուսուցչի հետ, որը նշանակում է, որ կարող է ցանկացած հարց տալ սենյեին ու ստանալ պատասխան: Երբ կարատեն դեռ նոր էր ստեղծվել, առաջին պարապմունքներին հաճախողները սենյեյի կողմից ստանում էին տարբեր առաջադրանքներ, ինչպես օրինակ՝ մաքրել մարզադահլիճը, որտեղ անցնում են պարապմունքները: Դա ձեւավորում էր կարգապահություն: Նման առաջադրանքներ մենք հիմա չենք կատարում ու չենք տալիս, բայց պահպանում ենք կարգապահության այլ սկզբունքներ, որոնք հատուկ են կարատեի դպրոցներին: Դրանցից են մարզադահլիճում իրենց ճիշտ պահելը, սենյեյին դիմելիս խոնարհվելը, ավագ մարզիկներին հարգելը: Ընդհանրապես կարատեն սկսվում է հարգանքով եւ վերջանում է հարգանքով: Հարգանքով է վերջանում է հարգանքով: Հարգանքով է փոխադրվում այդ շենք, սովորելով եւ հետեւելով փոխադրված հարգանքի սկզբունքներին, աշակերտները դառնում են ավելի կարգապահ, հնազանդ իրենց սենյեյին, որը նույնպես հարգում է նրանց: Ուրիշ մարզածեներում, որտեղ չկան այս սկզբունքները, մարզիկները դառնում են ավելի էմոցիոնալ, լինում են դեպքեր, երբ մարզիկն անզան իրեն թույլ է տալիս ծայրը բարձրացնել մարզչի վրա, ինչը միանշանակ բացառվում է մեր աշակերտների մոտ:

- Մարտարվեստում բարձունքների հասնելու համար ի՞նչ է անհրաժեշտ սենյե դառնալու համար:

- Շատերն են կարող գերազանց մարզիկ լինել, բայց ոչ բոլորն են կարող սենյե դառնալ, եթե նույնիսկ շատ ցանկություն ունենան: Սենյեյ դառնալու համար պարտադիր չէ լինել լավ մարզիկ, բավական է լինել լավ աշակերտ ու փոքրուց ունենալ սովորեցնելու հակում: Սենյեյ միշտ պատրաստ պետք է լինի տալ ինֆորմացիա, ուսուցանել, սովորեցնել, բայց չսպասել փոխադրվելու: **- Մարտարվեստում բարձունքների հասնելու համար ի՞նչ է անհրաժեշտ:**

- Մեզ համար բարձունքն ինքնակատարելագործման ձգտելն է, այսինքն, այն ճանապարհը, որն անցնում է մարզիկը՝ սկսած կարատեում առաջին քայլերից: Կախված է մարդու տեսակից, թե ներսից ձգտում ունի՞, իր բնավորությանը համապատասխան՞ում է ընտրած զբաղմունքը: Կարելու է, որ մարտիկ լինելու բնավորություն ունենա կամ քո մեջ դաստիարակես դա, լինես աշխատասեր, նպատակասլաց, սեր եւ ցանկություն ունենաս սովորելու, կատարելագործվելու, մարզվելու, պարապմունք առ պարապմունք բացահայտելու ընդունակությունները՝ հղկելով վարպետությունը:

- Փոխվել է մեթոդիկան, այն ավելի շատ ադաբտացվել է ժամանակակից կյանքին: Վնասվածքներ ստանալն անխուսափելի էին կարատեում, իսկ հիմա կարելի է ասել, որ հեշտացվել է, կատարելագործվել է եւ դարձել ավելի ճիշտ: Բայց տարբերությունը նաեւ այն է, որ հիմնիկա երեխաներն ավելի դժվար են սովորում կարատեն, քան մեր սենյեներն իրենց հասակում: Գուցե դա պայմանավորված է նրանով, որ բնությունից հեռացել ենք ու սկսել նախապատվություն տալ արդի տեխնոլոգիաներին: Առաջներում պարապմունքի վայրեր էին բակերը, տանիքները, անտառները, որտեղ պարապելը այդնքան էլ հեշտ չէր, բայց դժգոհություն չկար: Իսկ հիմա շատերին փափուկ պայմաններն են գրավում պարապելու համար:

- Տիգրան, հետեւելով Ձեր մասնակցած մրցաշարերին՝ տեսնում ե՞ք, որ չեք բավարարվում միայն մեկ մրցակարգի մասնակցելով: Կարատեում գոյություն ունեցող կատա, կումիտե եւ ուրիշ մրցակարգերից գրեթե բոլորին մասնակցում եք: Իսկ ո՞րն է արդյունավետ. բոլորին մասնակցել, թե՞ ընտրել մեկ մրցածու ու ձգտել խորացված տիրապետել դրան:

- Ավանդականում չկա այդպիսի տարանջատում, որ ընտրես մեկը եւ խորանաս: Մարզիկն իրավունք ունի մասնակցել բոլոր մրցակարգերով ընթացող մրցաշարերին: Իսկ մրցաշարերը մեր պարապմունքների մասն են, որոնք հնարավորություն են տալիս ստուգել սովորածը, մարզվելու մակարդակը: Այդպիսով մարզիկը ցույց է տալիս, որ իր մարզումներն արդյունավետ են, ու բազմակողմանի գաղափարում է մարտարվեստում:

- Կարատեն համարում են մի ճանապարհ, որն անցնում են իսկական մարտիկները: Մարտիկի ուղին անցնելու ընթացքում ո՞ր փուլն է Ձեզ անմոռանալի փորձ տվել:

- Ամենից շատ փորձ են տվել սեւ գոտու որակավորման քննություններն իրենց պահանջներով: Կարճ բնորոշմամբ՝ մարզիկին ինքնաճանաչումը: Իսկ եթե փորձեք ավելի մանրամասն, ապա սեւ գոտու տեխնիկան ներառում է մարզիկին բոլոր հմտությունները, որոնք պետք է կարողանալ օգտագործել, կառավարել մեր միտքը, շնչառությունը մարզել ու շնչառությամբ կառավարել մարմինը, հույզերը հասցնել կայուն վիճակի, որը մինչև հիմա էլ շարունակում են կատարելագործման հասցնել:

- Լինելով լավ մարզիկ՝ Դուք հայտնի եք նաեւ որպես լավ մարզիչ, վայելում եք Ձեր սաների ու նրանց ծնողների սերն ու հարգանքը որպես սենյե: Լավ մարզիչ լինելու համար պարտադիր է լավ մարզիկ լինել: Առհասարակ ի՞նչ է անհրաժեշտ սենյե դառնալու համար:

- Շատերն են կարող գերազանց մարզիկ լինել, բայց ոչ բոլորն են կարող սենյե դառնալ, եթե նույնիսկ շատ ցանկություն ունենան: Սենյեյ դառնալու համար պարտադիր չէ լինել լավ մարզիկ, բավական է լինել լավ աշակերտ ու փոքրուց ունենալ սովորեցնելու հակում: Սենյեյ միշտ պատրաստ պետք է լինի տալ ինֆորմացիա, ուսուցանել, սովորեցնել, բայց չսպասել փոխադրվելու: **- Մարտարվեստում բարձունքների հասնելու համար ի՞նչ է անհրաժեշտ:**

- Մեզ համար բարձունքն ինքնակատարելագործման ձգտելն է, այսինքն, այն ճանապարհը, որն անցնում է մարզիկը՝ սկսած կարատեում առաջին քայլերից: Կախված է մարդու տեսակից, թե ներսից ձգտում ունի՞, իր բնավորությանը համապատասխան՞ում է ընտրած զբաղմունքը: Կարելու է, որ մարտիկ լինելու բնավորություն ունենա կամ քո մեջ դաստիարակես դա, լինես աշխատասեր, նպատակասլաց, սեր եւ ցանկություն ունենաս սովորելու, կատարելագործվելու, մարզվելու, պարապմունք առ պարապմունք բացահայտելու ընդունակությունները՝ հղկելով վարպետությունը:

Շնորհավորանք

ԱՇԽԱՏԱՆԵ՝ ՍԻՐՈՎ ՌԵԿՐՈՒՄՈՎ



Երեխաներին դասավանդող ուսուցիչը հարգանքի է արժանի ավելի, քան ծնողը, որին երեխան պարտական է լոկ իր ծնունդով: Մեկը մեզ կյանք է պարգևում, մյուսը՝ արժանավոր կյանք:

Արիստոտել

Մարտի 19-ին

Հարգանքի արժանի այդ ուսուցչուհին կրտսեր դպրոցականների սիրելի ընկեր Լավասարյանն է՝ մայրիկի նման ներողամիտ... Նա լավի, բարու, ազնիվի սերմնացան է ու կարողանում է հայացքով ընդգրկել մանուկ էությունը մի ակնթարթում և դառնալ նրա փխրուն հոգու ճշգրիտ թարգմանը... Պարզ, անկեղծ, անմիջական: Այս դասավարի ու նրա աշակերտների համդիպումը մշտապես հետաքրքիր ու ոգեշունչ է:

Հոգու նվիրվածությամբ է կատարում իր աշխատանքը ընկեր Լավասարյանը: Նա առաջինն է իր սաների առջև բացում հայրը երկաթագիր ոսկեդեմիկի գեղեցիկ հրաշալիքը, թեև տալիս նրանց երազանքներին, տոգորում հայրենիքի հանդեպ անսահման սիրով ու նվիրվածությամբ, սովորեցնում լինել իսկական մարդ՝ ազնիվ, համեստ, առաքինի, վեհանձն ու շիտակ, ճշմարտի ու գեղեցիկի համար պայքարող, գոհողություններից պատրաստ, ժժվարություններից չընկրկող...:

Նվիրումով աշխատելը Անուշ Լավասարյանի էությունն է, հաջողության գրավականը: Նա նաև հետաքրքիր ու անկրկնելի միջոցառումների կազմակերպիչ է: Ա. Լավասարյանի կազմակերպած ու վարած յուրաքանչյուր ցերեկույթ հետաքրքիր է, բովանդակալից, լի անակնկալներով... Նա զուգակցում է մարդկային բարձր արժեքները մանկավարժական վարպետության հետ, զգում յուրաքանչյուր աշակերտի հոգին, դառնում նրա հոգու նրբին լարերի ամենավաղ ընթերցողը:

Եվ հենց ինքն իր պահվածքով ու կեցվածքով ջերմություն ու լույս է տարածում սաների շրջանում և կոլեկտիվում: Սիրած գործին մոտենում է ստեղծագործաբար՝ անընդհատ նորոգելով իր աշխատանքային զինանոցը:

Շուրջ չորս տասնամյակի հասնող մանկավարժական տարիները չեն խաթարել նրա անսպառ եռանդն ու նվիրյալ առաքելությունը, չեն նվազեցրել հոգուն ամբարած սերը, բարությունը, նվիրումը սաներին փոխանցելու պատրաստակամությունը:

Տարիների եթե... Հիմա 60 տարեկան է բուլրիս կողմից սիրված դասվարը՝ Անուշ Լավասարյանը: Տարիները կարծես սահել են կողքով. նույն բարի դեմքը, վարակիչ ծիծաղը, աշակերտներին տեսնելու ժամանակ ճառագող ժպիտը...:

Շնորհավոր տարեդարձ, սիրելի գործընկերուհի, ցանկանում ենք քեզ աստղաբույլ երջանկություն, խաղաղ Արցախ, հաջողություններ քո սուրբ ու նվիրական աշխատանքում...

Միշտ բարի ցանկություններով՝

Կադարծու միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ԳԱՐԻԵԼՅԱՆ-95

ՂԱՍԱԳՐՔԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԳՐՈՂ

Արցախը ոչ պաշտոնական երկու խորհրդանիշ ունի՝ «Մենք ենք մեր սարերը» կոթողն ու «Ղարաբաղի հորովել» երգը: Այս երկու ստեղծագործությունները լավագույնս ներկայացնում են արցախյան արքեպիսկոպոսի քաղաքացիական կյանքը: Ընդ որում, երկու ստեղծագործությունների կոգնիտիվ բովանդակությունը իմաստային ավելի խորը շերտեր ունի, քան զուտ քանդակի կամ երգի գեղագիտական ակունքն է: Հատկապես «Մենք ենք մեր սարերը»-ի հեղինակը քանդակագործ էր՝ մասնագիտական նեղ մասնագիտությամբ, ապա «Ղարաբաղի հորովել» երգի հեղինակը բանաստեղծ-մանկագիր էր, որը երաժշտական կրթություն չուներ և անգամ երաժշտական նոտաները չգիտեր:

Նկատենք, որ «Ղարաբաղի հորովել»-ի մեղեդին միշտ չէ, որ հիացական գնահատականի է արժանացել: Մասնավորապես, ծնունդով արցախցի բանաստեղծ Միքայել Հարությունյանը (հանրահայտ «Աստված էլ է դարաբաղցի» ստեղծության հեղինակը) յուր ժամանակին գտնում էր, որ երգը ողբածայն է հնչում, ինչը չի արտացոլում հայ շինականի լատենտությունը: Հորովելի մեղեդու մեջ նա տեսնում էր արևելյան երաժշտարվեստի ճնշող տարր, որն արտահայտվում էր տողավերջի ելևէջային երկարացումներով: Միևնույն ժամանակ Հարությունյանը բարձր էր գնահատում «Ղարաբաղի հորովել»-ի տեքստային խորաշերտերը՝ այն համարելով հայ դասական պոեզիայի իսկական նմուշ:

Գարո Ապերը՝ Գուրգեն Գաբրիելյանը (երբեմն այդ ծածկանունով էր հանդես գալիս), հայ գրականության մեջ հաստատուն տեղ ունի: Միայն «Այբուբենը երգերի մեջ» բանաստեղծական ժողովածուն, որը յուրօրինակ այբբենարան է մեսրոպյան տառերը սերտող մանուկների համար, բավարար է նրան բարձրակարգ գրող համարելու համար: Գաբրիելյանը, կյանքի մեծ մասն ապրելով ԼՂԻՄ-ում, որը խորհրդային տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ում ինքնավար վարչական միավոր

էր համարվում, առավել հաճախ տպագրվում էր Բաքվում, սակայն նրա ստեղծագործությունները թարգմանաբար հրատարակվում էին նաև խորհրդային մյուս հանրապետություններում՝ ՌՍՖՖՐ, Ուկրաինա, Բելոռուսիա, Մոլդովիա և այլն: Հայ ընթերցողը հնարավորություն ուներ կարդալու և՛ Բաքվում, և՛ Երևանում տպագրված նրա գրքերը, որոնք ավելի ճանաչելի էին դարձնում հեղինակին:

Հախուռն բնավորությամբ Գուրգեն Գաբրիելյանին դժվար է տեղավորել մարդկային պարզ նկարագրի մեջ: Բայց այդ ներհակության մեջ նա անվիճելիորեն տաղանդավոր էր: Գրական հանդիպումների ժամանակ, երբ խնդրում էին ընծայագրել նորահրատարակ գիրքը, նա էքսպրոնտ տարբերակով հետաքրքիր մակագրություններ էր անում՝ բառի բուն իմաստով հիացնելով իր երկրպագուներին: Անսահման սիրուն էր Արցախը, ու գարնանային չէ, որ հզոր տաղանդի տեր գրողն այդպես էլ չլքեց արցախյան հողը, չզայթակղվեց օտար փառքերով, առավել բարեկեցության չհավակնեց: Անցյալ դարի 60-ականների կեսերին, երբ Արցախյան շարժման առաջին փափանիկն ալեկոծեց խորհրդային իրականությունը, կենտրոնական իշխանությունները հայտնի «13-ի նաճակի» հեղինակներին արտաքսեցին Լեռնային Ղարաբաղից (Բագրատ Ուլուբաբյան, Բոգդան Ջանյան և ուրիշներ), սակայն ընթացողների խմբից երկու հոգի՝ Գուրգեն Գաբրիելյանն ու Մաքսիմ Հովհաննիսյանը, համառորեն մնացին Արցախում: Մնացին ոչ թե պարզապես գոյատևելու, այլ ստեղծագործաբար արարելու, իսկ հետագայում՝ համաժողովրդական մոր ընթացողները լրացուցիչ լիցքեր հարողորդելու համար: Ընդհանրապես, պայքարի կողմնակցությամբ գրողների գործուն մասնակցության մասին հիմա քիչ է խոսվում, թեպետ համաժողովրդական գաղթների ժամանակ գրչի մշակների դերակատարությունն անուրանալի էր: Շարժման որոշակի փուլում մոդերնատորությունը գրողների կողմից ստանձնելն, անշուշտ, արդարացված էր ու

տվեց իր դրական արդյունքը:

Մանկագրությունը ստեղծագործական բարդ բնագավառ է, և թերևս դրանով պիտի բացատրել այդ ժանրով գրող հեղինակների սակավությունը հայկական գրատարածքում: Գուրգեն Գաբրիելյանը մանկագիր էր ամենից առաջ կոչումով, այլ ժանրի գործերը բնութագրական չէին նրա նկարագրին: Անվանի մանկագիրն, իհարկե, «մեծական» բանաստեղծություններ էլ է գրել (ընդգծված որակումը Գուրգեն Գաբրիելյանը հաճախ էր օգտագործում), սակայն դրանք ընդամենը եղել են ծրագրային ստեղծագործություններ՝ պայքարի չափածո կոչեր, ազատամարտիկներին ոգեշնչող ոտանավորներ և այլն, որոնք մոր շտրիխներ չեն ավելացնում գրողի ստեղծագործական կերպարին:

Ժամանակակիցները Գուրգեն Գաբրիելյանի կենցաղավարության մասին երբեմն հումորային պատմություններ են պատմում, բայց նրան մոտիկից ճանաչողները հրաշալի գիտեին, որ նա թիրախավորված մտավորական էր: Բաքվի ու Ստեփանակերտի քաղաքական իշխանությունները թեպետ չէին սիրում գրողին, սակայն նրա տաղանդի հանդեպ ցուցադրական զուսպ էին: Ավելի ճիշտ, փորձում էին ուրիշ ձեռամբ վնասել նրան:

Ահավասիկ, ասվածը փաստող մի ուշագրավ դրվագ: 1987-ի գարնանը Բաքվի գրական հայ համայնքի միջոցով նախաձեռնվեց Գուրգեն Գաբրիելյանին հանրորեն վարկաբեկելու գործընթաց: Նրա՝ այսպես կոչված, գրագողության մասին ծավալուն հոդված գրվեց «Միջոց», թերթի համար: Մանկագրին այսպես էին այլալեզու հեղինակներին, ի մասնավորի Օվսեյ Դրիզից ու Իվան Դեմյանովից արտագրելու մեջ: Նախքան տպագրելը «Միջոց», -ի խմբագրությունը հանուն պատշաճության հոդվածը համապատասխան առայններով ուղարկեց Ստեփանակերտ՝ գրագողությունը հաստատող եզրակացություն գրելու համար: Քանի որ միջադեպի հետ կապված շոշափվում են նաև որոշ

անուններ, որոնք հրապարակելը հիմա կոռեկտ չէր լինի, հակիրճ նշեմ, որ եզրակացությունը գրելու ժամը պարտականությունը դրվեց տակավին երիտասարդ ու նման «դատավճիռներ» գրելու գործում միանգամայն անփորձ... տողերիս հեղինակի վրա:

Վերոհիշյալ հեղինակների ստեղծագործությունների մանրամասն ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Գ. Գաբրիելյանն, իրոք, ժամանակին Դրիզից ու Դեմյանովից կատարել է փոխադրություններ, որոնք հայերեն առաջին հրատարակության մեջ պարունակել են անհրաժեշտ հղումներ, սակայն ռուսերենից փոխադրության վերաբերյալ նշումները հետագա հրատարակություններում, չգիտես ինչու, հանվել էին: Եզրակացության մեջ ես այդ փաստը բացատրել եմ հրատարակության անփութությամբ, այլ ոչ թե տիպական գրագողությամբ: Կարելի է ենթադրել, թե ինչպիսին եղավ եզրակացության առթիվ Բաքվի ու նրա արցախյան էմիգրանտների արձագանքը: Ես կամենայն և՛ որ հողվածը «Միջոց», -ում չտպագրվեց, և Գուրգեն Գաբրիելյանի բարի համբավը պահպանվեց: Դժվար է ասել՝ կարունակվե՞ր նրան վարկաբեկելու փորձերը, եթե ամիսներ անց չբարձրանար Շարժման իններորդ ալիքը...

Ավանավոր մանկագրի ու բանաստեղծի ստեղծագործական ժառանգությունը դեռևս գիտական պատշաճ հետազոտման չի արժանացել, թեև բոլոր գիտական հիմքերը կան նրան իրապես դասագրքային մեծություններ կարգելու համար: Եթե ընդունենք, որ գրողի իսկական ճանաչումը տեղի է ունենում նրա մահվանից հետո, ապա Գուրգեն Գաբրիելյանին կարելի է հավերժ կենդանի համարել, քանի որ այսօր էլ դարձյալ շարունակում են նրան նույն ակնածանքով կարդալ: Անկասկած, կկարդան նաև վաղը:

Կիմ ԳԱՐԻԵԼՅԱՆ
Գրող, բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՄԵՍ ԱՆՀԱՏՆԵՐ, ԻՄԱՍՏՈՒՆ ԹԻՄԵՐ



պետականություն կամ ուժեղ պետություն չունենալու արդյունքում մարդիկ իրենք են «իրենց գլխի ծարր» տեսնում: Ու քանի որ միասին աշխատելու հնարություններ չունենք, շարունակում ենք մտածել, որ գալու է մի հզոր անհատ ու փրկելու է Հայաստանի կրթական համակարգը:

Միշտ դժգոհ ենք իրարից, խոսում ենք իրար մասին, բայց ոչ իրար հետ: Օրինակ՝ երբ ուսուցիչներն են միասին խոսում, բողոքում են կառավարիչներից: Երբ կառավարիչներն են իրար հետ զրուցում, դժգոհում են տնօրեններից, ուսուցիչներից: Իսկ երբ ազգովի ենք խոսում, դժգոհում ենք այլ պետություններից, որոնք մեզ չեն պաշտպանում: Միշտ ուրիշներին մեղադրելով՝ արդարացնում ենք ինքներս մեզ, և ոչինչ չի փոխվում: Երկի մարդը կարող է փոխել միայն ինքն իրեն: Բայց մենք միշտ ձգտում ենք փոխել ուրիշներին, ոչ թե մեզ:

Համագործակցային մշակույթի բացակայության պատճառով Հայաստանում անգամ տաղանդավոր մարդիկ չեն զարգանում: Նայում են՝ երիտասարդ, խոստումնալից, տաղանդավոր մարդ է: Բայց մի քանի տարի հետո դառնում է մեծամիտ, ինքնասիրահարված մասնագետ, չի կարողանում համագործակցել խմբերում, անընդհատ ընդգծում է իր «ես»-ը: Իրականում

Հայաստանը զարգացնելու համար մեզ ոչ այնքան վառ անհատներ են պետք, որքան լավ թիմեր: Բայց մենք թիմեր կառուցել էլ չգիտենք: Երբ ինչ-որ մեկին հնարավորություն են տալիս թիմ ձևավորել, արտերկիր գործուղման մեկնողների ցանկ կազմել, առաջին հերթին թիմում ընդգրկում են «տնեցիներին», ընկերներին: Ցավալին այն է, որ այդպես են վարվում նույնիսկ դրսերում կրթության ստացած, ժողովրդավարությունից, ազատությունից խոսող բազմաթիվ մարդիկ: Այդ մարդիկ մեղադրում են հասարակ ժողովրդին «կոռումպացված, գավառական մտածողության մեջ», բայց երբ գործելու պահն է գալիս, ոչնչով չեն տարբերվում այն հասարակ ժողովրդից, որին պիտակավորում են: Եվ երբ մարդիկ տեսնում են, որ դեկավարներն իրենց շրջապատում են յուրայիններով, մտերիմներով, թիմային ոգին փլուզվում է: Իհարկե, այն կարծիքին չեն, որ մտերիմ մարդիկ չպետք է միասին աշխատեն: Եթե պրոֆեսիոնալ են, խնդիր չկա: Այս տարի աշխարհի լավագույն թիմ դարձած Մադրիդի «Ռեալ»-ի մարզչական կազմում ընդգրկված են հայր և որդի: Թունոն ղեկավարում են ամուսիններ, որոնք երկուսն էլ բարձրակարգ պրոֆեսիոնալներ են:

Մեր կրթական համակարգի գլխավոր խնդիրը պիտի լինի համագործակցող, համեստ քաղաքացիներ ձևավորելը: «Ալլոբացող», «մեծամիտ» «փակ» մարդիկ վտանգավոր են մեր երկրի համար, նույնիսկ եթե ամենագետ են: Գիտելիքը մարդուն պետք է դարձնի ավելի համեստ, համագործակցող, բաց: Շատ բան իմացող մարդը պետք է հասկանա, թե որքան շատ բան դեռ չգիտի ու լինի ավելի համեստ: Մեզ մոտ այդպես չէ: Բավական է մի քանի հաջողություն, դրան հաջորդող շրջապատի՝ «դու լավագույնն ես» արձագանքը, և մարդը սկսում է մեծամտանալ: Ցավոք, կրթության ոլորտում շարունակում են դոմինանտ մնալ քննությունները, թեստերը, շենքերի թեման, բայց գրեթե չկան քննարկումներ նմանատիպ արժեքային թեմաների վերաբերյալ: Ոչ ոք չգիտի, թե ինչպիսի քաղաքացիներ ենք մենք ուզում դաստիարակել: Իհարկե, կան հայտնի բաներ՝ ժողովրդավար, հայրենասեր և այլն: Բայց դրանք բավարար չեն: Պետք են ավելի կոնկրետ ձևակերպումներ, պետք է ճանապարհային քարտեզ:

Հայաստանում պետք է ստեղծվի մասնագիտական աշխատանքային խումբ, որում, բացի կրթության ոլորտի ներկայացուցիչներից, պետք է ներկայացված լինեն գիտնականները, մշակույթի գործիչները, բիզնես ոլորտի ներկայացուցիչները, պետական և հասարակական

մարմինների ներկայացուցիչներ: Այս խմբի նպատակը պիտի լինի ձևակերպել Հայաստանի կրթության ոլորտի արժեքային կողմնորոշիչները:

Կրթության նախարարությունը պետք է համախմբի մարդկանց և հնարավորություն տա միասին աշխատելու: Միասին աշխատելու հարթակներ ստեղծելը պիտի լինի կրթական բարեփոխումների շարժիչ ուժը: Երբ կառավարիչը, ուսուցիչը, դասախոսը, տնօրենը, արվեստագետը, գործարարը միասին սկսեն աշխատել, մենք կունենանք առաջընթաց: Երբ ղեկավարները լսեն համակարգի մարդկանց, մենք կունենանք առաջընթաց: Քանի՞ դեպք գիտեք, երբ ինչ-որ համաժողովում նախարարության բարձրաստիճան պաշտոնյան նստել ու լսել է ուսուցիչ լեույթ: Բացման խոսք ասելուց հետո պաշտոնյաները լքում են կոնֆերանսները, սեմինարները: Ժամանակի անիմաստ կորուստ: Դեպքեր գիտեմ, երբ նախարարության բարձրաստիճան պաշտոնյան հասել է Դիլիջան՝ ընդամենը բացման խոսք ասելու համար:

Այսօր մենք ունենք եսակենտրոն անհատներ, թույլ թիմեր: Բայց մեզ պետք են համեստ անհատներ, իմաստուն թիմեր:

Սերոբ ԽԱՉԱՏՐՅԱՆ
168.am

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԿ ԼԵՎՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆԻ «ՉԸՆԴՅԱՏՎԱԾ ԿՈՂ. ԸԱՅՈՑ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



Սույն թվականի հունիսի 3-ին «ԱՐՏ ԲՐԻՉ» գրախանութ-սրճարանում տեղի ունեցավ 33 գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանի «ՉԸՆԴՅԱՏՎԱԾ ԿՈՂ. հայոց գենետիկական պատմություն» գրքի շնորհանդեսը:

Այս մենագրությունը հիմնված է Հարավ-արևմտյան Ասիայի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայերի ծագման ավելի քան 20-ամյա ուսումնասիրության վրա: Մենագրության մեջ դիտարկվում են էթնոսների առաջացման գենետիկական ինքնության ձևավորման պայմանները, ներկայացվում են հայոց ծագումնաբանության վարկածների գենետիկական ստուգման արդյունքները, վեր են հանվում սփյուռքահայ խմբերի բնագաղթների և այլ էթնիկական կազմավորումների հետ նրանց շփումների հետևանքները, ընդգծվում է «Պատմական Հայաստանի գենետիկական ատլաս»-ի ստեղծման կարևորությունը, քննարկվում է հայկական գենոֆոնդի կայունությունն ապահովող գործոնների դերը:

«Մեր պատմության համար կա մեկ կարևոր տեսակետ՝ մեր բնիկության կամ ոչ բնիկության հարցը: Մենք չենք ունեցել գիտական հիմ-

նավորված տվյալներ դրա վերաբերյալ: Այդ հարցի պատասխանը չէին կարող տալ ոչ պատմաբանները, ոչ հնագետները, ոչ լեզվաբանները, ոչ դիցաբանները:

Եկել է ժամանակը, որ այդ հարցի պատասխանը պետք է տա գենետիկական ծինաբանները: Մենք ցույց ենք տալիս, որ այսօր ապրող հայերս շատ մոտ ենք բրոնզե դարում ապրած մարդկանց: Դա նշանակում է, որ մենք ունենք գենետիկական անընդհատություն: Չնայած այն հանգամանքին, որ մեր տարածաշրջանը ենթարկվել է տարբեր նվաճողների ազդեցությանը, մենք կարողացել ենք մեր գենոֆոնդը առնվազն 4-5 հազար տարի պահել առանց որևէ նկատելի ազդեցության: Սա կարևոր է այն տեսանկյունից, որ մենք սահմանում ենք՝ մենք ոչ թե հատուկ հայկական գենի կրող ենք, այլ մեր կայունությունը հազարամյակների ընթացքում ապահովել է մեր ինքնագիտակցու-

թյունը, մեր էթնիկական ինքնությունը»,- շնորհանդեսի ժամանակ ասաց Լևոն Եպիսկոպոսյանը: «ՉԸՆԴՅԱՏՎԱԾ ԿՈՂ. հայոց գենետիկական պատմություն» գրքի պատասխանատու խմբագիր, 33 ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 33 ԳԱԱ թղթակից-անդամ Ռուբեն Հարությունյանն ասաց. «Այս գիրքն ամեն հայի համար կլինի հիմնարար իր արմատների իմացության տեսանկյունից: Գրքում նշվում է, որ 0,5 %-ն է միայն հայերի մոտ դրսից բերված գենոֆոնդը: Հեղինակն իր գործընկերների հետ արդեն ստացել է հնագույն ԴՆԹ-ի տվյալներ, որոնց հիման վրա շատ հետաքրքիր կլինի համեմատել, թե որքան ենք մենք տարբերվում մեր նախնիներից»:

Հայ-ռուսական համալսարանի Արևելագիտության ինստիտուտի մտօրեն Գառնիկ Ասատրյանը նշեց. «Գրքում ամենակարևոր սկզբունքն

այն է, որ հայկական գենոֆոնդը բացահայտվել է Հայկական լեռնաշխարհում: Սա բնիկության կարևոր փաստ է»: Լևոն Եպիսկոպոսյանի խոսքով՝ գիրքը թիմային աշխատանքի արդյունք է: «Գրքի պատասխանում մասնակցել են բազմաթիվ մասնագետներ նաև հարակից գիտակարգերից՝ պատմաբաններ, հնագետներ, լեզվաբաններ և դիցաբաններ: Նրանք ինձ օգնել են՝ ավելի ընդգրկուն ներկայացնելու այս հարցը գենետիկայի տեսանկյունից»,- ասաց նա:

Լևոն Եպիսկոպոսյանը գիրքը կասցեագրել է հարակից գիտակարգերով զբաղվող իր գործընկերներին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են Հայաստանի գենետիկական պատմությամբ:

33 ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՆՈՖՈՆԴԸ ԿԱՅՈՒՆ Է ԱՌԵՎԱԶՆ 6000 ՏԱՐԻ. ԼԵՎՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

«Հայկական գենոֆոնդի տարբեր հիմնաշերտերի վերհանումը» թեմայով դրամաշնորհային ծրագրի շրջանակում 33 ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում նոր սարքավորված լաբորատորիա կստեղծվի, որտեղ կիրականացվի սպիտակուցի անջատում պեղումների ժամանակ հայտնաբերված չնույնականացված ոսկրային նմուշներից: Հետագայում ծրագրվում է յուրացնել նաև հնագույն ԴՆԹ-ի անջատման փուլը:

Ինչ վերաբերում է բուն գենետիկական հետազոտությանը, ապա, ըստ ծրագրի ղեկավար Լեւոն Եպիսկոպոսյանի, այն կիրականացվի արտերկրում՝ Դուբլինի համալսարանի համապատասխան լաբորատորիայում: Հետազոտության համար անհրաժեշտ սարքավորումը թանկ է և Հայաստանում ունենալը դեռևս ոչ նպատակահարմար. մեր ուսումնասիրման նյութը քիչ է՝ սարքավորումը ողջ ծավալով աշխատեցնելու տեսանկյունից, բայց այն մեծ արժեք ունի արտասահմանյան գործընկերների համար եվրոպական քաղաքակրթության նախապատմական փուլերն ուսումնասիրելու գործում:

«Մեր նյութը շատ հրապուրիչ է նրանց համար: Մենք ապրում ենք այն տարածաշրջանում, որտեղից սկսվել է ժամանակակից քաղաքակրթությունների զարգացումը: Այստեղից Եվրասիայի անծայրածիր տարածքներ է դուրս եկել մարդ բանականը, որը նեոլիթյան դարաշրջանից Եվրոպայում տարածել է հնդեվրոպական լեզուն: Կարելի է ասել, որ մենք տուն պահող ավագ որդիներն ենք, իսկ եվրոպացիների նախնիները այստեղից գաղթել են տարբեր ուղղություններով»,- նշեց գիտնականը:

Ինչպես ներկայացրեց Լեւոն Եպիսկոպոսյանը, հայկական գենոֆոնդի հետազոտման աշխատանքները սկսվել են դեռ 25 տարի առաջ, երբ համագործակցության հնարավորություն ստեղծվեց այդ ոլորտի առաջատար միջազգային կենտրոնների հետ, մասնավորապես՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի TCGA (The Center of Genetic Antropology) Գենետիկական մարդաբանության կենտրոնի հետ:

Առաջինը, ինչ ցույց տվեցին համատեղ հետազոտությունները, հայկական գենոֆոնդը բավականին հին է, այն մոտ 5000-6000 տարեկան է: Սա շատ կարևոր հայտնագործություն է հայերի ծագումնաբանության ուսում-

նասիրման տեսանկյունից:

«Բացատրեմ: Մի բազմություն սկսում է առանձնանալ եւ ձեւավորվել որպես ժողովուրդ, երբ այն մեկուսանում է եւ քիչ է շփվում ուրիշների հետ, խոսում է մի լեզվով, որով ուրիշները չեն խոսում: Քանի որ ուրիշների հետ ամուսնությունները զանգվածային բնույթ չեն կրում, բազմացումը տեղի է ունենում միայն այդ խմբի ներսում, ապա անընդհատ տեղի ունեցող գենետիկական փոփոխությունները, որոնք մուտացիաներ են կոչվում, կուտակվում են միայն այդ բազմության տիրույթում: Եվ եթե դա տեղի է ունենում դարեր, հազարամյակներ շարունակ, ապա կուտակված մուտացիաների հիման վրա կարելի է ստանալ այդ պոպուլյացիային բնորոշ գենետիկական նկարագիրը ու դրա հիման վրա նույնականացնել դրա ներկայացուցիչներին»:

Մենք մեր հարեւաններից սկսում ենք տարբերվել ոչ թե յուրահատուկ, այսպես կոչված, «հայու» գենի, այլ մեր գենոֆոնդին հատուկ մուտացիաների պատճառով: Այդ գենետիկական բնութագրիչների, մարկերների շնորհիվ մենք տալիս ենք շատ հարցերի պատասխաններ հայ ժողովրդի ծագումնաբանության վերաբերյալ»,- ասաց նա:

Գիտնականը հավելեց, որ գենետիկական հետազոտությունը ազգի ծագումնաբանության եւ պատմության ուսումնասիրման գործիքներից միայն մեկն է: Ամբողջական պատկեր ստանալու համար պետք է համադրել հնագետների, պատմաբանների, լեզվաբանների, հնամարդաբանների, մշակութաբանների եւ այլն տվյալները: Այսինքն՝ պահանջվում է միջգիտակարգային մոտեցում:

Լեւոն Եպիսկոպոսյանի ու նրա գործընկերների երկրորդ կարևոր եզրակացությունն այն էր, որ այդ ողջ ժամանակահատվածում հայկական գենոֆոնդը գործնականորեն փոփոխություն չի կրել՝ ի տարբերություն տարածաշրջանի այլ ժողովուրդների:

«Չնայած Հայաստանը եղել է խաչմերուկ, տարբեր զավթիչների արշավանքների է ենթարկվել, բայց, այնուամենայնիվ, մենք կարողացել ենք պահպանել ու պաշտպանել մեր գենետիկական ինքնությունը: Այսինքն՝ մենք չենք ունեցել նրանց հետ գենետիկական շփումներ: Ոմանք կարող են ասել, որ դա անհնար է: Պարզ է, որ երբ այստեղ զավթիչ է մտել, եւ պղծել է, եւ բռնաբարել է եւ այլն: Բայց, քանի որ մենք այսօր այդ հետքերը

չենք գտնում, ուրեմն, գործել է ինչ-որ մեխանիզմ, որը դա մաքրել է, գտել է մեր գենոֆոնդը»,- ասաց նա:

Գիտնականի խոսքով, դա կարող է մի քանի բացատրություն ունենալ: Առաջին. խառնամուսնությունները հայկական հասարակությունում չէին խթանվում: Անշուշտ, դա չի վերաբերել արքայական կամ իշխանական ընտանիքներին, քանի որ այդ ընտանիքներում ամուսնությունները կատարվում էին քաղաքական նպատակով: Բայց այդ ընտանիքներն ազգի շատ չնչին քանակն էին կազմում: Երկրորդ, վկայություններ կան, որ հայկանայք ինքնասպանությունն անպատվությունից գերադասելի էին համարում:

«Տառիկս պատմում էր, որ Գարդման գավառում եթե կինը հղիանում էր թաթարից, ուներ երկու ելք՝ կամ ազատվել այդ պողից, կամ ծննդաբերել մեծ քաղաքում, որտեղ երեխան արդեն որպես հայ չէր մեծանում: Այսինքն, գործել են մեխանիզմներ, որոնք ունեն ոչ թե գենետիկական, այլ՝ սոցիալական, մշակութաբանական, ինքնությունը պահպանելու հիմք»,- ասաց Լեւոն Եպիսկոպոսյանը:

Հնագիտությունից մեզ հայտնի է, որ Հայաստանի տարածքում հնագույն ժամանակներում տեղի է ունեցել մի շարք մշակույթների փոփոխություն: Պատմաբաններն այդ փոփոխությունները բացատրում են օտարների ներխուժմամբ, նրանց կողմից տարածքի զավթմամբ: Օրինակ՝ կուր-արաքսյան մշակույթի թռեղք-վանածորյան մշակույթով փոխարինումը (մ.թ.ա. 2500-2400թթ.): Գենետիկական հետազոտությունները կարող են պատասխանել հետեւյալ հարցին. եղե՞լ է, արդյոք, ներխուժում, եւ ի՞նչ ճակատագիր է ունեցել բնիկ ժողովուրդը:

Ինչպես պարզաբանեց գիտնականը, այդ հարցի սպառիչ պատասխանը մենք կստանանք մի քանի տարուց:

«Կարող եմ ասել, որ նախնական պատասխանն արդեն կա, բայց այն պետք է ստուգվի: Մեր այսօրվա արդյունքներով մեր գենոֆոնդը կայուն է առնվազն 6000 տարի: Սրանից մոտ 3000 տարի առաջ ինչ-որ ազդեցություն եղել է, որն էլի եղել է մեր տարածաշրջանից՝ Մերձավոր Արեւելքից, բայց, այնուամենայնիվ, մեր գենոֆոնդը 70-80%-ով պահպանվել է անփոփոխ:

Մասնագետները հետաքրքիր մի բան են նշում՝ երբ մեր տարածաշրջանում Ա մշա-

կույթը փոխարինվում է Բ մշակույթով, այդ Բ մշակույթի զարգացման փուլերը մեզ մոտ չեն նկատվում: Այսինքն, այդ Բ մշակույթը այստեղ չի զարգացել: Այսօր հնագետների եւ մշակութաբանների շրջանում կա համոզմունք, որ այդ մշակույթը կամ ավանդույթը, ինչպես իրենք են ասում, բերվել է դրսից արդեն ավարտական ձեւով», - ասաց գիտնականը:

Ինչ վերաբերում է ներխուժմանը, ապա, ըստ Լեւոն Եպիսկոպոսյանի մշակույթը անպայման չէ որ սովորաբար զանգվածներով բերվի: Դա կարող են անել քիչ քանակությամբ մարդիկ՝ այդ մշակույթը որպես «նորածեղություն» ներմուծելով: «Պատմության մեջ շատ քիչ է եղել, ուղղակի մատների վրա կարելի է հաշվել, որ զանգվածը եկել է, եւ գրավել է այլ տարածք, եւ համարյա հետքեր չեն մնացել նախորդ բնակչությունից: Մեր տարածաշրջանում տեսնում ենք, որ այդպիսի բան տեղի չի ունեցել: Այսինքն, այսօր ես եւ իմ գործընկերները հակված ենք նրան, որ բնակչությունը եղել է կայուն, բայց ներմուծվել է նոր մշակույթ, նոր ավանդույթ փոքրաթիվ զանգվածների միջոցով»,- ասաց նա:

Խոսելով այն մասին, թե ինչ դժվարությունների են հանդիպում այս հետազոտության ընթացքում, Լեւոն Եպիսկոպոսյանը նշեց, որ ժամանակակից Հայաստանը զբաղեցնում է հայերի բնակչության պատմական արեալի ընդամենը 10%-ը, ինչը լրջորեն սահմանափակում է գիտնականների հնարավորությունները:

«Պատմական Հայաստանի 90%-ը մեր պետական սահմաններից դուրս է, եւ այդ դուրսը մեծ մասամբ «թշնամական դուրս է», այնտեղ ոչ մարդաբանական աշխատանք կարող ենք կատարել, ոչ՝ գենետիկական, ոչ՝ հնագիտական, ոչ էլ արխիվներում կարող ենք աշխատել: Բայց Աստված բոլոր դռները փակելով՝ մի պատուհան թողել է: Պատուհանը հենց գենետիկան է: Այսինքն՝ մենք ունենք նաև մեր պատմությունը՝ գրված մեր ԴՆԹ-ում, մեր գենոմում»,- ասաց նա:

Սակայն բարդությունը միայն այն չէ, որ հայ գիտնականները չեն կարող պեղումներ իրականացնել, ասենք, Թուրքիայի տարածքում: Եղե՞նք մի հայերի՝ աշխարհով մեկ սփռվելու պատճառով շատ դժվար է գտնել մարդկանց, որոնց եւ մայրական, եւ հայրական գծով նախնիները պատմական Հայաս-

ՄԱՐԶԻՉ ԿԱՅՐԵՐ

ԵՐԿՈՒ ՊԱՇՏՈՆՈՒՄ

տանի նույն շրջանից են եղել: Իսկ նոր ուսումնասիրության համար այժմ անհրաժեշտ է առնվազն 250 այդպիսի դոնոր: Այդ հարցում շատ է օգնում Արցախը, որտեղ հայ բնակչությունը կայուն է եղել դարեր շարունակ: Արտահոսք եղել է, Արցախը միշտ հանդիսացել է դոնոր Հայաստանի եւ հարեւան երկրների համար, բայց ներհոսք կամ այլ եթնիկական խմբերի հետ միախառնում չի եղել:

Ժամանակակից դոնորների գեոմոֆի վերծանումից հետո այն պետք է համեմատել Հայաստանի հնագույն բնակիչների գեոմոնների հետ: Այդ նմուշները վերցնում են պեղումների ժամանակ գտնված մարդու ոսկորներից:

«Բայց պեղումները, ցավոք, մենք կարողանում ենք կատարել միայն ներկայիս Հայաստանի տարածքում: Մի 20 տարի պեղել ենք Արցախում, այսօր, կարծում են, ժամանակավոր այդ գործընթացը կանգնած է: Բայց մենք հաստատ շարունակելու ենք, քանի որ Արցախը չափազանց հարուստ է մեր հնավայրերով ու դամբարաններով»,- համոզմունք հայտնեց գիտնականը:

Ըստ նրա, հնագետների հետ սերտ համագործակցությամբ գեոետիկները կարողանում են պատասխանել հետեւյալ հարցերին. «Ո՞վ է այստեղ ապրել՝ սկսած նեոլիթյան ժամանակաշրջանից, 8 հազար տարի առաջ»:

«Այդ մարդու ոսկրի, ԴՆԹ-ի մեջ չկա գրած, որ նա հայ է: Բայց այնտեղ դրոշմված է հետեւյալը. արդյո՞ք նա մեր տատն է կամ պապը: Եվ սրանից 5 տարի առաջ մենք պատասխանեցինք այդ հարցին մայրական գծով. 8000 տարի առաջ այստեղ ապրել են մեր կենսաբանական նախնայրերը: Անշուշտ, այդ նախնայրերը հայ չեն եղել, քանի որ այն ժամանակ չէին կարող ունենալ հայկական գիտակցություն եւ խոսել հայերեն»,- պարզաբանեց գիտնականը:

Համեմայն դեպք, նշեց նա, այսօր գեոետիկական ոչ բոլոր հարցերի պատասխաններն է կարող տալ: Այդ պատճառով հայ գիտնականները դոնորների գեոետիկական բանկ են ստեղծում՝ հետազոտությունները հետագայում շարունակելու նպատակով: Դա արվում է երկու պատճառով. առաջին՝ գեոետիկների հաջորդ սերունդների համար շատ ավելի դժվար կլինի գտնել մարդկանց, որոնց բոլոր նախնիները մի շրջանից են եղել, երկրորդ՝ կատեղովի ավելի զգայուն սարքավորում, եւ կենսաչափական ու վիճակագրական անալիզի ավելի հզոր մեթոդներ կնշակվեն, ինչի շնորհիվ հնարավոր կլինի այդ նմուշներից ավելի շատ տեղեկատվություն քաղել:

Ինչ վերաբերում է մեր հարեւաններին, ապա Լեւոն Եպիսկոպոսյանը քանիցս փորձել է կապեր հաստատել թուրք գործընկերների հետ, բայց հասկացել է, որ փորձերն անիմաստ են: Այդ ոլորտը Թուրքիայում չափազանց քաղաքականացված է:

Այսպես, մի թուրք գիտնական նրան պատմել է, որ խնդիրներ ունի դեկավարների հետ, քանի որ իր ասպիրանտը ատենախոսության մեջ ցույց է տվել, որ թուրքերի գենոֆոնդի ընդամենը 15%-ն է թյուրքական: Մնացածը բնիկ ժողովուրդների՝ հայերի եւ հույների գեոետիկական ժառանգությունն է:

Աղբբեջանում վիճակն էլ ավելի տխուր է. այստեղ գեոետիկական ուսումնասիրություններ համարյա չեն իրականացվում: Դեպք է եղել, երբ Աղբբեջանից մի կին գիտնական թալիշների վերաբերյալ թեզ է պաշտպանել Մոսկվայում, եւ նրա ուսումնասիրությունները փաստել են, որ թալիշները գեոետիկորեն ավելի մոտ են հայերին, քան աղբբեջանցիներին: Դրանից հետո կինը սկսեց սպառնալիքներ ստանալ եւ ստիպված քաղաքական ապաստարան խնդրեց եվրոպական երկրներից մեկում:

Նշենք, որ «Հայկական գենոֆոնդի տարբեր հիմնաշերտերի վերհանումը» հետազոտությունը իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի առաջատար հետազոտությունների աջակցության ծրագրի շրջանակում: Խոսելով այս ծրագրի մասին՝ Լեւոն Եպիսկոպոսյանը ընդգծեց դրա մշակակությունը երիտասարդ գիտնականների պատրաստման, ավագ սերնդից կրտսեր սերնդին գիտելիքի փոխանցման հարցում:

Արցախում գործող տարբեր մարզական ֆեդերացիաներում կան մար-



Ալեքսան եւ Ալեն Աղաբալյաններ, մուայթայ

զիչ-հայրեր, որոնք իրենց երեխաներին նույնպես բերել են սպորտ: Մի ժամանակ որոշ մարզիչների էլ իրենց հայրերն են տարել սպորտ: Սերունդների այդպիսի կապն անգնահատելի է մեր անհանգիստ եւ անկայուն ժամանակներում: Առողջության համամարդկային արժեքները, ֆիզիկական կուլտուրայով, սպորտով ու մարտարվեստներով զբաղվելը, ընտանեկան ամուր ավանդույթներն են հենց կապող դեր կատարում մարդկանց միջեւ: Վստահությամբ կարող ենք ասել, որ սպորտն ամրացնում է ընտանիքը: Իսկ մարզիչ-հոր տղամարդկային դաստիարակությունը լավագույն դաս-



Սայաթ եւ Ռաֆայել Բաղդասարյաններ, վինգզյուն



Արթուր եւ Անիկա Առուշանյաններ, կիոկուշինկայ կարատե-դո:

նակ վերցնելու եւ հավասարվելու հիմք ունեն: Նրանք պարուրված չեն միայն ուշադրությամբ, հոգատարությամբ կամ պարզապես իրենց կողքին ծնողի մշտական ներկայությամբ: Մարզիչը խրատ է տալիս, քաջալերում է, սովորեցնում է հասկանալ սխալներ

ը եւ ուղղել դրանք: Ընդհանուր առմամբ, այսպես թե այնպես, մարզիչը երկրորդ հայր է իր սաների համար: Իսկ եթե նա ունի երեխաներ, որոնք նաեւ սպորտով են զբաղվում, դա եւս մեկ անգամ ապացուցում է նրա մասնագիտական պահանջվածությունը:

Ֆիզիկական հատուկ պատրաստությանը զուգահեռ ի՞նչ են ստանում երեխաները մարզական խմբակներում մարզիչի աշխատանքի շնորհիվ. օրվա ռեժիմ պահելու սովորություն, հիգիենայի նորմեր, ընդհանուր ֆիզիկական զարգացում, բարոյականալից հատկանիշների ձեւավորում, բնավորության դաստիարակում, ինքնակազմակերպվելու եւ ինք-



Արմեն եւ Նժդեհ Պետրոսյաններ, կիոկուշինկայ կարատե-դո:



Արմեն, Դանիել եւ Ջավեն Ղահրամանյաններ, քիքբքսինգ:

երկու պաշտոնում գտնվելը: Տանը՝ հայր, մարզադահլիճում՝ մարզիչ, որին հաճախ համեմատում են երկրորդ հոր հետ: Իսկ ինչպե՞ս է, երբ մարզիչը հենց հայրդ է: Յուրաքանչյուր հոր համար մեծագույն ուրախություն է իր զավակի հաջողությունը, իսկ մարզիչ-հոր համար՝ առավել եւս: Դժվար չէ նկատել, թե երեխաներն ինչքան են սիրում իրենց մարզիչ հայրերին, հարգում են ու հպարտանում նրանցով: Ինչքա՞ն լավ է, որ կան զրուցելու ընդհանուր թեմաներ, որոնցից են սպորտը, մարզական նորությունները, մրցաշարերին պատրաստվելը, մարզական համատեղ պլաններն ու ծրագրերը:



Տիգրան եւ Էմիլիա Գետրոգյաններ, ավանդական կարատե-դո:

Մարզիչ-հայրերին եւ նրանց զավակներին ցանկանում ենք քաջառողջություն, երջանկություն, ընտանեկան բարեկեցություն եւ, իհարկե, նոր մեղավեր ու մարզական հաջողություն:

(Ֆոտոշարքը համալրված է ոչ բոլոր մարզիչներով ու իրենց մարզիկ զավակներով:)

նահսկողության հմտություններ, ինքնուրույնության, պատասխանատվության ձեւավորում, կոլեկտիվում ապրելու կարողություն, հաղթանակների ու պարտությունների փորձ: Այս ամենը կյանքում անպայման պետք է գալիս: Ինչպե՞ս է մարզիչ-հայրերի համար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՍՏԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՃՈՒՂ-ՎԱՃԱՌՔ



21.06.2022թ. աճուրդը չի կայացել հայտ ներկայացված չլինելու պատճառով: «Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2022թ. հուլիսի 19-ին, ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանի կողմից ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք. Ստեփանակերտի Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ-վաճառք հետևյալ լոտերով.

ԼՈՏ 1՝ Կաթսայատուն (փաստացի հացի արտադրամաս): Սեփականության վկայականի համար՝ 115352: Սեփականատեր՝ Էդգար Լավրենտի Միրզոյան: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը. շենքի մակերեսը կազմում է 166,16 ք.մ, հողամասի մակերեսը՝ 307,0 ք.մ: Վիճակը՝ նորմալ: Հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների փ. թիվ 52/11: Սեկնարկային գինը՝ **11.960.320 ՀՀ դրամ:**

Լոտ 2՝ Գրասենյակ: Սեփականության վկայականի համար՝ 081575: Սեփականատեր՝ Արգամ Լավրենտի Միրզոյան: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը. շենքի մակերեսը կազմում է 11,89 ք.մ: Վիճակը՝ միջին: Հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ա.Մանուկյան փ. թիվ 10: Սեկնարկային գինը՝ **589.824 ՀՀ դրամ:**

Լոտ 3՝ Հողամաս: Սեփականության վկայականի համար՝ 094690: Սեփականատեր՝ Արգամ Լավրենտի Միրզոյան: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը. հողամասի մակերեսը կազմում է 1410,0 ք.մ, վիճակը՝ լավ: Հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ստարովոյտովա փ.: Սեկնարկային գինը՝ **5.636.096 ՀՀ դրամ:**

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն, \$Ա դեպքում անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպքում՝ պետ.գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մ/դ հ/հ 22301050288600:

Աճուրդին մասնակցելու ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա ժամը 16.00, կարող են հայտ ներկայացնել՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին, հեռ.՝ 097-22-29-22 կամ՝ 093-89-22-79:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ՍՆԱՆԿ ՃԱՆԱԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (Դատարան) 2022թ. մայիսի 26-ի վճռով պատասխանող Սաթենիկ Արարատի Սուլեյմանյանը (անձնագիր՝ AU0612258 09.02.2022թ. 049-ի կողմից) ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 26.05.2022թ.:

Դատարանի 01.06.2022թ. որոշմամբ՝ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ձ Արմեն Խաչատրյանը:

Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան սնանկության մասին այս հայտարարությունից մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի առաջին ժողովը նշանակված է 2022թ. հուլիսի 11-ին, ժամը 12:00-ին՝ Դատարանի շենքում (հասցե՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42)»:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Խաչատրյան

24.06.2022թ. աճուրդը չի կայացել հայտ ներկայացված չլինելու պատճառով:

21.07.2022թ. ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի կողմից ք. Ստեփանակերտ Ազատամարտիկների 42 հասցեում՝ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի շենքում կանցկացվի «Մայակ» ՍՊԸ ԸԻԴ/0001/04/20 սնանկության գործով Լավրենտ Մերյոժայի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդ-վաճառք՝ բաց դասական եղանակով, 1 առանձին լոտով:

Լոտ 1՝ Բնակարան: Հասցե՝ ՀՀ, ք. Աբովյան 3-րդ միկրոշրջան, 20 շենք, թիվ 19 բնակարան: Սեփականության վկայականի համար՝ 894201: Սեփականատեր՝ Լավրենտ Մերյոժայի Միրզոյան: Գրավադրված է «Մայակ» ՍՊԸ-ի պարտքերի դիմաց: Գույքի նկատմամբ գրանցված է գրավի իրավունք Արցախի ներդրումային հիմնադրամում: Բնակարանը ծանրաբեռնված է բնակիչներով: Լոտի նկարագրությունը. Բնակարան, մակերեսը կազմում է 74,04 ք.մ: Բնակարանը գտնվում է 9-րդ հարկանի շենքի 1-ին հարկում: Հատակները՝ մանրատախտակ, մուտքի և ներսի դռները, ինչպես նաև պատուհանները՝ փայտյա, սանհանգույցի պատերը և հատակը սալիկապատված են: Ընդհանուր առմամբ բնակարանի ներքին հարդարումը միջին վիճակում է և 6 բալանոց (1Վատ վիճակ, իսկ 7՝ գերազանց) սանդղակով գնահատվում է 3: Սեկնարկային գինը **18.540.000,0 ՀՀ դրամ:**

Գույքի սեփականության փոխանցման, պետական գրանցման և հնարավոր վտարման հետ կապված ծախսերը կատարում է գնորդը:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների դեպքում՝ պետական գրանցումը (հաշվառումը) հաստատող փաստաթղթերի պատճենները, իսկ իրավաբանական անձանց դեպքում նաև կանոնադրության և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

բ/լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով,

գ/աճուրդի նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը:

Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար աճուրդի մուտքի վճարը սահմանվում է 5000 ՀՀ դրամ: Նախավճարը և մուտքի վճարը վճարվում են «Արցախբանկ» ՓԲԸ-ում «Մայակ» ՍՊԸ սնանկության հատուկ հաշվին՝ 22301050288600:

Աճուրդին մասնակցել ցանկացողները և աճուրդի մասնակցի չհամարվող անձինք մինչև 16.07.2022թ. ներառյալ կարող են աճուրդի մասնակցության հայտ ներկայացնել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեով:

Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը, և այդ գինը համարվում է լոտի վաճառքի գին: Լոտի վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված: Աճուրդի հաղթողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու կամ արձանագրությունը ցանկացած այլ պատճառով չստորագրվելու դեպքում ստորագրվելու դեպքում նախավճարը հետ չի վերադարձվում:

Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավորվում է աճուրդի արձանագրությունը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի արժեքը, նվազեցնելով վճարած աճուրդի նախավճարի չափը: Հաղթող մասնակցի կողմից աճուրդի արձանագրությունը չստորագրելու կամ 10 օրվա ընթացքում ամբողջությամբ գույքի արժեքը չվճարելու դեպքում որպես նախավճար մուծված գումարը չի վերադարձվում:

Եթե համապատասխան հայտ ներկայացրած անձը աճուրդին չի մասնակցում կամ մասնակցում է, սակայն չի հաղթում, ապա նրա կողմից վճարված նախավճարը ենթակա է վերադարձման:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար սնանկության հատուկ հաշվին նախօրոք մուծվում է պատճենահանման ծախս՝ 100 ՀՀ դրամ կամ 093892279 համարին կարճ հաղորդագրությամբ ուղարկվում է էլեկտրոնային փոստի հասցեն, որի վրա սնանկության գործով կառավարիչը ուղարկում է աճուրդի կանոնակարգը:

Վաճառվող գույքի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու, ուսումնասիրության և աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանին՝ 093 892279 հեռախոսահամարով:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Խաչատրյան

ԿՈՐԵԼ Է

Արկաղյա Բաչիկի Խաչիյանի՝ 8-ամյա դպրոցի 166863 համարի կրթության վկայականը՝ տրված 2002 թվականին Սարգսաշենի միջնակարգ դպրոցի կողմից, մնացել է Արթրեշանի կողմից օկուպացված Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղում: Համարել անվավեր:

Արսեն Բաչիկի Խաչիյանի՝ միջնակարգ կրթության ԱԱ N392199 ատեստատը՝ տրված Մարտունու շրջանի Սարգսաշենի միջնակարգ դպրոցի կողմից, մնացել է Արթրեշանի կողմից օկուպացված Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղում: Համարել անվավեր:

«Եզնիկ Մոյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի շրջանավարտ Արսեն Արթուրի Մուսայելյանին պատկանող՝ 037012 համարի դիպլոմը՝ տրված ուսումնարանի կողմից 2018-2019 ուսումնական տարում: Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ | ԽՍՐԱԳԻՐ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ | Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ | Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info | Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 28.06.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: